

ԴԱՍԱՏԵՏՐ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ի Թէոզոսիա, Ի 22 Նոյեմբերի 1862

Նոր Տիպ Փարիզ

2003 - ՌՆԾԳ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն

Այս դասատետրը քաղուածք մըն է այն ընդարձակ աշխատասիրութեան որ կը պատրաստուի ի վերայ կարգաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ: Եթէ այն քահանայից եւ ընդհանրապէս աստուածաբանական գիտութեան հետեւողաց հարկաւոր է, սա այն կերպով գրուած է որ ամենայն բարեպաշտ հաւատացելոց պիտանի եւ օգտակար լինի, ուստի եւ ազգային միջակ ու բարձրագոյն ուսումնարանաց անշուշտ կարեւոր:

Մեր ազգին եկեղեցական մատենագրութեանը հմուտ եղողներուն յայտնի է որ երեք գլխաւոր հեղինակ եւ առաջնորդ ունիմք հին ատենէն Մեկնութեան խորհրդոյ սուրբ Պատարագին, այսինքն Մեծն Խոսրով՝ սուրբ Նարեկացւոյն հայրը, երանելին Ներսէս Լամբրոնացի, եւ Յովհաննէս Արճիշեցի սրբակրօն վարդապետը: Տարակոյս չկայ որ սուրբ Պատարագի խորհրդոյն ըստ արժանւոյն խորհրդագգած լինել ցանկացողը կարող է նոցա, մանաւանդ Լամբրոնացւոյն՝ գրուածքը կարդալ: Բայց այս փոքրիկ դասատետրակն եւս՝ իբրեւ անոնց մէկ քաղուածքը՝ իւր պիտանութիւնն ունենալով, յուսամք թէ սիրով կ'ընդունուի յամենայն բարեպաշտից եւ ի վարժապետաց կրօնական գիտելեաց ազգիս:

Հայր Գաբրիէլ Վրդ. Այվազեան

ԴԱՍԱՏԵՏՐ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Հարց. Ի՞նչ է պատարագը:

Պատ. Պատարագն է անարիւն զոհ մարմնոյ եւ արեան Քրիստոսի Տեառն մերոյ, զոր ինքն Քրիստոս եւ եկեղեցին Քրիստոսի կը մատուցանեն Աստուծոյ ի ձեռն քահանայից ընդ տեսակօք հացի եւ գինւոյ՝ ի յիշատակ պատարագի սրբոյ Սաշին:

Հարց. Ինչո՞ւ զոհ կ'ըսուի պատարագը:

Պատ. Վասն զի հին ատենի արտաքին զոհերուն պէս կը մատուցուի Աստուծոյ, փոխարկման հացին եւ գինւոյ ի մարմին եւ յարիւն Քրիստոսի:

Հարց. Ո՞վ է մատուցող սուրբ պատարագին:

Պատ. Միայն քահանայական կարգն ունեցողք, որք եւ իրենց պատարագ մատուցած օրը ժամարար կը կոչուին, այսինքն այն օրուան ժամերգութիւնը կատարող ու պատարագը մատուցող:

Հարց. Ինչո՞ւ կ'ըսուի թէ Քրիստոս եւ եկեղեցին Քրիստոսի կը մատուցանեն պատարագը Աստուծոյ:

Պատ. Վասն զի պատարագի խորհուրդին բուն մատուցողը ինքն իսկ Քրիստոսն է՝ քահանայապետն ճշմարիտ. բայց եւ ամենայն հաւատացեալք, - որոց գլուխք եւ պաշտօնեայք են եպիսկոպոսներն ու քահանաները, - կը մատուցանեն այս գերագոյն զոհը՝ ըստ հրամանի Փրկչին որ ասաց առաքելոց. «Ձայս արարէք առ իմոյ յիշատակի», - Այսպէս ըրէք իմ յիշատակիս համար:

Հարց. Ժամարար քահանային սուրբ պատարագը մատուցանելու համար ըրած պատրաստութիւնները որո՞նք են:

Պատ. Օրեր առաջ եկեղեցւոյ գաւիթը կամ ժամատան մէջ ննջել, վերջին իրիկունը գոնէ մէկ կանոն սաղմոս քաղել, եւ պատարագ մատուցանելու օրը ուրիշ քահանայի մը առջեւ իր մեղքերը խոստովանիլ:

Հարց. Ե՞րբ հաստատեց Քրիստոս պատարագի խորհուրդը:

Պատ. Իր չարչարանաց նախընթաց օրը, յորում հացն ու բաժակը առաւ ու ասաց. «Այս է մարմին իմ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի: - Այս է արիւն իմ որ

յաղագս ձեր եւ բազմաց հեղանի: - Զայս արարէք առ իմոյ յիշատակի»: այսինքն. Այս իմ մարմինս է որ ձեզի եւ ուրիշ շատերու համար կը բաժնուի: - Այս իմ արիւնս է որ ձեզի ու շատերուն համար կը թափուի: - Այս բանս ըրէք իբրեւ ինծի յիշատակ:

Հարց. Ի՞նչ նպատակաւ կը մատուցուի սուրբ պատարագը.

Պատ. ա) ի փառաբանութիւն Աստուծոյ՝ իբրեւ ողջակէզ. բ) ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց՝ իբրեւ գոհ քաւութեան. գ) ի նշան գոհութեան եւ շնորհակալութեան առ Աստուած. դ) ի հայցուած շնորհաց եւ ողորմութեանն Աստուծոյ:

Հարց. Որո՞ւ համար կը մատուցուի սուրբ պատարագը.

Պատ. Վասն ամենայն մարդկան՝ կենդանեաց եւ ննջեցելոց:

Հարց. Ո՞ւր կամ ինչպիսի՞ տեղեր կարելի է մատուցանել սուրբ պատարագը.

Պատ. Եկեղեցիներու եւ օրհնեալ մատուռներու մէջ՝ օծեալ վէմ-քար ունեցող սեղանի վրայ:

Հարց. Շարժական սեղանի վրայ կարելի՞ է պատարագ մատուցանել.

Պատ. Այո՛, եւ այս սովորութիւնը շատ հին է ամենայն եկեղեցեաց մէջ:

Հարց. Սկիզբն ու մաղգման ի՞նչպէս պիտի լինին.

Պատ. Հին ատենի սկիզբն եւ մաղգման (այսինքն սկիզի ծածկոյթը կամ խուփը) կ'ըլլային փայտէ, քարէ, ապակիէ, ոսկորէ, պղինձէ, անագէ, արծաթէ եւ ոսկիէ. իսկ այժմ վաղուց սովորութիւն եղած է ոսկիէ ընել սկիզբն եւ մաղգման, կամ թէ ոսկեգօծ արծաթէ:

Հարց. Քչոցը ի՞նչ խորհուրդ ունի.

Պատ. Հին սովորութիւն էր եկեղեցեաց քրիստոնէից որ սեղանոյն քովը ճանճ քշելու գործիք կը դրուէր, եւ կիսասարկաւագներէն մէկը անով սկիզէն հեռու կը քշէր ճանճերը: Յետ ժամանակաց այն գործիքը գեղեցկացուցին, եւ այժմու քչոցը որ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ զարդերէն մէկն է:

ԶԳԵՍՏՔ

Հարց. Եպիսկոպոսունք եւ քահանայք պատարագ մատուցանելու ատեն ինչո՞ւ համար սովորականէն տարբեր զգեստներ կը հագնին.

Պատ. Աւելի վայելչութեան, մաքրութեան եւ ժողովրդեան պատկառանք ազդելու համար. ինչպէս որ հին օրինաց մէջ եւս պատուիրած էր Աստուած Մովսիսի ձեռքովը որ քահանայապետն ու քահանայք եւ բոլոր պաշտօնեայք սեղանոյն իրենց համար զատ զատ զգեստներ ունենան:

Հարց. Ժամարար քահանային իւրաքանչիւր զգեստները մէկ մէկ խորհուրդ կամ նշանակութիւն ունի՞ն թէ ոչ.

Պատ. Սուրբ Հարք այն զգեստուց ամէն մէկուն վրայ պէս պէս բարոյական ու վայելուչ խորհրդածութիւններ կ'ընեն. եւ ժամարարը ամէն մէկ զգեստը հագնելու ատեն ըսած աղօթական խօսքերուն մէջ այն բարոյական նշանակութիւնները կ'ուտայ անոնց. որ բարեպաշտական գեղեցիկ արարողութիւն է:

Հարց. Ժամարարին զգեստներուն բնական նշանակութիւնները ի՞նչ են.

Պատ. Մաղաւարտն ու վակասը կնգուղի կամ հովուական վեղարի տեղ են՝ գեղեցկացած. փորուրարը եւ բազպանները հին ատենի Հրէից քահանաներուն եփուղին տեղը, եւ շուրջառը կամ նափորտը պատմութեանին տեղը:

ԺԱՄՈՒՑ ԿԱՄ ՅԻՇԵԼԻՔ

Հարց. Ժամուց կամ յիշելիք ասուած տուրքն ի՞նչ է:

Պատ. Ժամուց կամ յիշելիք կ'ըսուի այն կամաւոր տուրքը որ բարեպաշտ հաւատացեալներ կուտան քահանային՝ խնդրելով որ յիշէ զիրենք սուրբ պատարագին մէջ. եւ միանգամայն այս մտքով որ այն իրենց ընծայած տուրքը ապրուստ մը լինի քահանային, որ շատ օրինաւոր եւ վայելուչ բան է:

Հարց. Ուրիշ ի՞նչ տուրք կուտան հաւատացեալք ժամարարին կամ եկեղեցւոյն սուրբ պատարագի համար:

Պատ. Ուզողը առջի իրիկուրնէ քահանային այն օրուան նշխարին համար ալիւր կը դրկէ եւ բաժակին համար գինի, եւս եւ սեղանոյն վրայ վառելու մոմ, եւ ծխելու խոնկ, որ խիստ հին եւ գովելի սովորութիւնն է, ու մեր ազգին մէջ դեռ շատ տեղ կը պահուի:

ԱՒՈՒՐՔ ԵՒ ԺԱՄ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հարց. Հարց. Ամէն օր կարելի՞ է պատարագ մատուցանել:

Պատ. Այո՛, եւ ի սկզբան առաքեալք ամէն օր կը պատարագէին. բայց յետոյ սովորութիւն եղաւ շաբաթ ու կիրակի օրերը պատարագ մատուցանել, թէպէտ եւ ամէն օր մատուցանելն եւս արգիւրուած չէ: - Մեր եկեղեցւոյ ընդհանուր սովորութիւնն է՝ աղուհացից մէջ եւ Նինուէացւոց ապաշխարութեան ուրբաթ օրը, կամ նաեւ բոլոր Առաջաւորաց շաբաթը չպատարագել. իսկ ուրիշ օրեր, մանաւանդ շաբաթն ու կիրակին անպատճառ պատարագ մատուցանել, եթէ մեծ արգելք մը չկայ:

Հարց. Օրուան ո՞ր ժամուն կը մատուցուի ս. պատարագը:

Պատ. Որովհետեւ առաքելական աւանդութեամբ սովորութիւն եղած է ծոմ բերնով պատարագելը, հարկ կը համարուի ճաշէն կամ կէսօրէն առաջ մատուցանել սուրբ պատարագը. եւ սովորաբար երրորդ ժամուն, որ է ըստ Եւրոպացւոց՝ առաւօտեան իննէն մինչեւ տասը կամ տասնըմէկ:

Հարց. Իրիկուն ատեն կարելի՞ է պատարագ մատուցանել:

Պատ. Այո՛, ա, երբոր ստիպողական հարկ մը պահանջէ, ինչպէս որ հարկ լինի սուրբ հաղորդութիւն տալ վտանգաւոր հիւանդաց, եւ պատրաստ հաղորդ չգտնուի. եւ բ, Զատիկի եւ Մննդեան ճրագալուցի օրերը, ինչպէս որ մեր եկեղեցւոյն առաքելական սովորութիւնն է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳ ԵՒ ԱՂՕԹՔ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հարց. Պատարագը քանի՞ մասերու կը բաժնուի ընդհանրապէս.

Պատ. Երկու գլխաւոր մաս, կը կոչուին, Պատարագ երախայից եւ Պատարագ հաւատացելոց:

Հարց. Պատարագ երախայից ըստածը ո՞րն է.

Պատ. Պատարագին այն մասն է որ երախայք՝ այսինքն չմկրտուած անձինք, եւս եւ ապաշխարողք կամ թերահաւատք կարող էին տեսնել, որպէս զի այն միջոցին կարգացուած եւ տրուած խրատները լսեն. եւ այս մասն է պատարագին սկիզբէն մինչեւ «Իսկ մեք փառաւորեսցուք» աղօթքը, կամ մինչեւ վերաբերութիւնը:

Հարց. Պատարագ հաւատացելոց մասը ո՞րն է.

Պատ. Պատարագին երկրորդ մասը, որ վերաբերութենէն կ'սկսի. վասն զի հին ատենը սովորութիւն էր այն միջոցին եկեղեցիէն դուրս հանել երախայքը (չկ'նքուածները), բանադրեալները, անհաւատներն ու ապաշխարողները, եւ միայն հաւատացեալները ներսը թողուլ սուրբ խորհուրդը տեսնող եւ հաղորդուող:

Հարց. Պատարագին ընդհանուր կարգը նո՞յն է յամենայն եկեղեցիս քրիստոնէից.

Պատ. Այո, նոյն է ըստ էական մասանց, բայց գրեթէ ամենայն եկեղեցիք եւս իրենց համար զատ զատ արարողութիւններով զարդարեր են պատարագի խորհրդոյն կատարումը: Եւ մեր Հայաստանեայց եկեղեցւոյ պատարագի կարգադրութեան վսեմութիւնն ու գեղեցկութիւնը վկայեալ է նաեւ օտարագգի գիտուններէ:

Գաղղիոյ քաջաճմուտ աստուածաբանին մէկը կ'ըսէ. «Արարողութիւն պատարագին առ Հայս մի ի գեղեցկագունիցն է արարողութեանց՝ ոչ միայն Արեւելից, այլ եւ տիեզերական եկեղեցւոյ»: եւ ուրիշ տեղ «Աքանչելի արարողութիւն» կ'անուանէ գայն

Հարց. Պատարագին աղօթքները հի՞ն են թէ նոր.

Պատ. Ամէնքն ալ շատ հին են:

Հարց. Ո՞վ շարադրած է այն աղօթքները.

Հարց. Ո՞վ շարադրած է այն աղօթքները.

Պատ. Առաջ Յակոբոս առաքեալը մէկ քանին, գուցէ եւ այլ առաքեալք՝ հիմնադիրք իւրաքանչիւր եկեղեցեաց. բայց յետոյ առաքելաշնորհ սուրբ Հարք, եւ յանուանէ սուրբն Բարսեղ Կեսարացի եւ սուրբ Յովհան Ոսկեբերան շարադրեցին գլխաւոր աղօթքները: Փոքր ինչ յետոյ կամ գրեթէ նոյն ատենները իւրաքանչիւր գլխաւոր եկեղեցիք զանազան աղօթքներով ճոխացուցեր են իրենց պատարագի հանդէսը. մեր սուրբ եկեղեցին եւս զարդարեր է իրենը մինչեւ սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն օրերը. բայց այնուհետեւ գրեթէ բոլորովին անփոփոխ եւ անխախտ մնացեր են ըստ ամենայն մասանց մեր պատարագի աղօթքներն ու արարողութիւնները:

Հարց. Պատարագի ատեն ժողովուրդը ի՞նչ աղօթք պէտք է ընէ:

Պատ. Անպատճառ հարկաւոր է որ ժողովուրդը եւս պատարագին մէջ ըստած աղօթքները ընէ, կամ նոցա իմաստովը շարադրուած ուրիշ աղօթքներ՝ սկիզբէն մինչեւ վերջը. եւ ոչ թէ փայտի պէս կանգնած մտիկ ընէ, կամ թէ սրտին ուզած ժամանակը՝ պատարագի վերջանալուն չսպասելով ձգէ ելնէ դուրս, որ շատ պարսաւելի պակասութիւն է:

ԱՂՕԹՔ ԶԳԵՍՏԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՔԱՀԱՆԱՅԻՆ

Հարց. Քահանան զգեստաւորուելէն առաջ ի՞նչ աղօթք կ'ընէ:

Պատ. Առաջ «Յիշեա Տէր գԴաւիթ» սաղմոսը կ'ըսէ, Սաղմոս 131, յորում շատ նշանակալից ու գեղեցիկ իմաստներ կան.

«Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Յիշեա՛ Տէր գԴաւիթ եւ զամենայն հեզութիւն նորա:

Որպէս երդուաւ Տեառն, եւ ուխտս եղ Աստուծոյ Յակովբայ:

Թէ ո՛չ մտից ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց:

Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեւանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց, մինչեւ գտից զտեղի Տեառն Աստուծոյ Յակովբայ:

Ահա՛ լուաք զնմանէ Եփրաթա, եւ գտաք զնա ի դաշտս մայրեաց:

Մտցուք ի յարկս նորա, երկիրպագցուք ի տեղտջ ուր կացեալ են ոտք նորա:

Արի՛, Տէր, ի հանգիստ քո, դու եւ տապանակ կտակի սրբութեան քո:

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Վասն Դաւթի սիրելոյ քո, մի՛ դարձուցաներ զերեսս քո յօժելոյ քումմէ:

Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա, ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա:

Թէ պահեսցեն որդիք քո զօրէնս իմ եւ վկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա:

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո:

Հաճեցաւ Տէր ընդ Սիոն, եւ ընտրեաց բնակել ի նմա. սաէ՛ Այս է հանգիստ

Քահանաներդ պիտի Հագնին արդարութիւն եւ սուրբերդ մեծ ուրախութեամբ պիտի ցնծան:

Յիշէ՛, Տէ՛ր, Դաւիթը եւ անոր ամբողջ հեծութիւնը:

Թէ ի՛նչպէս երդում ըրաւ եւ ուխտեց Յակոբի Աստուծոյն:

Թէ պիտի չմտնեմ իմ տանս յարկը եւ պիտի չբարձրանամ իմ մահճներուս անկողինը:

Թէ աչքերուս քուն կամ թարթիչներուս նինջ պիտի չտամ, եւ ո՛չ ալ մարմնիս՝ հանգիստ, մինչեւ որ Յակոբի Տէր Աստուծոյն պաշտամունքի տեղը գտնեմ:

Ահա լսեցինք անոր մասին թէ Եփրաթայի մէջ է, եւ զայն գտանք մայրիներու դաշտին մէջ:

Մտնե՛նք անոր սրբարանը եւ երկրպագութիւն ընենք անոր ոտքերուն կոխած տեղին:

Ելի՛ր, Տէ՛ր, քու Հանգստավայրդ, Դուն եւ քու սրբութեանդ տապանակ:

Թող քահանաներդ արդարութիւն Հագնին եւ սուրբերդ մեծ ուրախութեամբ ցնծան:

Քեզի սիրելի ու Դաւիթին Համար, մի՛ երես դարձներ քու օծեալէդ:

Տէրը ճշմարիտ երդում ըրաւ Դաւիթի եւ չստեց անոր, թէ քու որովայնիդ պտուղէն պիտի բազմեցնեմ քու աթոռիդ:

Եթէ որդիներդ պահեն իմ օրէնքներս եւ իմ վկայութիւններս, զորս պիտի սորվեցնեմ անոնց,

Անոնց որդիներն ալ պիտի նստին քու աթոռդ, յաւիտեանէ յաւիտեան:

Տէրը Հաւնեցաւ եւ ընտրեց Սիոնը, բնակելու՝ այնտեղ. Ան ըսաւ, այս է իմ իմ յաւիտեանս յաւիտենից. ի սմա բնակեցայց՝ զի Հաճեցայ ընդ սա:

Զայրիս սորա օրհնելով օրհնեցից, եւ զաղքատս սորա լցուցից հացիւ:

*Երիցանց սորա զգեցուցից զփրկու-
թիւն, եւ սուրբք սորա ցնծալով
ցնծասցեն:*

*Անդ ծագեցից եղջիւր ի Դաւիթ.
պատրաստ արարից զճրագ օծելոյ
իմոյ:*

*Թշնամեաց նորա զգեցուցից զամօթ.
եւ ի վերայ նորա ծաղկեսցի սրբու-
թիւն իմ:*

*Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ:*

*Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից: Ամէն:*

Հանգստարանս, անսկիզբ ու անվախճան ժամանակներու, այստեղ պիտի բնակիմ, որովհետեւ այստեղ Հաճոյ գտայ:

Ասոր այրիները շատ պիտի օրհնեմ եւ անոր աղքատները պիտի կշտացնեմ լիառատ հացով:

Ասոր երէցներուն պիտի Հագցնեմ փրկութիւն եւ ասոր սուրբերը մեծ ուրախութեամբ պիտի ցնծան:

Այստեղ ծնունդ պիտի տամ Դաւիթի եղջիւրին (իշխանութեան եւ պատիւին) եւ իմ օծեալիս ճրագը պատրաստ պիտի ընեմ:

Ասոր թշնամիներուն ամօթ պիտի Հագցնեմ, իսկ անոր վրայ իմ սրբութիւնս պիտի ծաղկի:

Փառք՝ Հօրը եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին. Հիմա եւ միշտ եւ յաւիտեանս: Ամէն:

Յետոյ այն վսեմ ու գեղեցիկ աղօթքը կ'ըսէ, որուն սկիզբն է «Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս»: եւ իմաստն է խնդրել ի Քրիստոսէ՝ որ իր մարդեղութեան խորհրդոյն անճառելի շնորհիւր արժանի ընէ քահանային մերկանալ մեղաց հանդերձը, եւ զարդարուիլ Քրիստոսի լուսափայլ շնորհօքը աստ եւ ի հանդերձեւումն, Քրիստոսի պատուիրանները անմեղութեամբ պահող քահանայից նման:

Հարց. Ժամարարը երբ սաղաւարտը գլուխը կը դնէ՝ ի՞նչ կ'ըսէ.

Եւ ապա կ'սկսի զգեստաւորուիլ՝ ամէն մէկ զգեստին պատշաճ աղօթքը ըսելով:

*Պատ. «Դի՛ր, Տէր, սաղաւարտ փրկութեան ի գլուխ իմ, պատերազմել ընդ զօրու-
թիւնս թշնամւոյն: Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:
Ամէն»:*

Տէ՛ր, փրկութեան սաղաւարտ դիր իմ գլխուս, որպէսզի կարենամ թշնամիին զօրութեան դէմ պատերազմիլ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովը: Իրեն կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը: Ամէն:

Հարց. Շապիկին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. «Զգեցո՛ ինձ, Տէր, հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան, եւ շուրջ պատեա զգեստովս փրկութեան: Շնորհօք Տեառն»:

Տէ՛ր, փրկութեան հագուստ եւ որախութեան պատմուճան հագցուր ինձի, եւ դուն ինքդ այս փրկութեան հագուստը պարուրէ, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Փորուրարին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. «Զգեցո՛ Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց: Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Տէ՛ր, արդարութեամբ զարդարէ՛ իմ պարանոցս, եւ սրբէ՛ սիրտս մեղքի բոլոր աղտերէն, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Գօտիին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. «Շուրջ պատեսցէ՛ կամար հաւատոյ զմէջս սրտի իմոյ եւ մտացս, եւ շիջուցցէ՛ ի սոցանէ՛ գխորհուրդս աղտեղիս, եւ զօրութիւն շնորհաց քոց յամենայն ժամ բնակեսցի ի սոցա. շնորհօք Տեառն»:

Թող հաւատքի գօտին շրջապատէ՛ միտքս եւ զգայանքներս, եւ ասոնց մարէ՛ բոլոր աղտոտ խորհուրդները: Եւ շնորհքներուդ զօրութիւնը թող՝ զայ բնակելու ասոնց մէջ, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Բազպանին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. «Տո՛ւր Տէր, զօրութիւն աջոյ (կամ ձախոյ) ձեռին իմոյ, եւ լուա՛ զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգևոյ եւ մարմնոյ»:

Տէ՛ր, զօրութիւն տուր՝ աջ ձեռքիս, (ձախ ձեռքիս) եւ լուա՛ բոլոր աղտոտութիւններս, որպէս զի կարենամ հոգիով ու մարմնով սպասաւորել քեզի, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Վահասին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. Զգեցո՛՛ Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն, եւ սրբեա՛ զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ՛ մեղաց: Շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Տէ՛ր, արդարութեամբ զարդարէ՛ իմ պարանոցս, եւ սրբէ՛ սիրտս մեղքի բոլոր աղտերէն, մեր Տիրոջ՝ Յիսուսի Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Նափորտին այսինքն Շուրջառին ի՞նչ կ'ըսէ.

Պատ. «Տէր, ողորմութեամբ քով զգեցո՛՛ ինձ զգեստ պայծառ, եւ պարսպեա՛ ընդդէմ ներգործութեանց չարին: Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անունդ: Շնորհօք Տեառն մերոյ եւ Յիսուսի Քրիստոսի»:

Տէր, քու ողորմութեամբդ՝ պայծառութեան զգեստը հագցուր ինձի, եւ պարսպէ՛ չարին բոլոր ներգործութիւններուն դէմ, որպէս զի արժանի ըլլամ փառաւորել քու փառաւորեալ անունդ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի շնորհքովը:

Հարց. Զգեստաւորուելէն յետոյ ի՞նչ աղօթք կ'ընէ քահանան.

Պատ. Այս խօսքերը կ'ըսէ, որ Եսայիայ մարգարէութենէն առնուած են. (61, 10):

«Յնծասցէ՛ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան. իբրեւ փեսայի եղ ինձ պսակ, եւ իբրեւ զհարսն զարդու զարդարեաց զիս. շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ եւ

վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Իմ հոգիս Տիրոջմով պիտի ցնծայ, որովհետեւ ինձի փրկութեան զգեստ եւ ուրախութեան պատմուճան հագցուց. փեսայի մը պէս թագ դրաւ գլխուս, եւ հարսի մը պէս զարդարեց, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի շնորհքովը, որուն կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հարց. Քահանային զգեստաւորուած ժամանակը դպիրները ի՞նչ կ'երգեն.

Պատ. «Խորհուրդ խորին» շարականը, որ Արեւելցի Խաչատուր վարդապետին շարադրածն է: Եւ տուներուն սկզբնատառերը Խաչատուր անունը կը կապեն: Իններորդ տունը «Թագաւոր երկնաւոր» ուրիշ հին շարական մը Մաղկազարդի կանոնէն առնուած:

Հարց. «Խորհուրդ խորին» երգին գլխաւոր իմաստները որո՞նք են.

Պատ. Առաջին տանը մէջ հրեշտակաց ստեղծագործութիւնը կը յիշուի.

«Խորհուրդ խորին անհաս անսկիզբն որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Ո՛վ անհասանելի եւ անսկիզբն՝ խորին խորհուրդ, որ քու երկնային թագաւորութիւնդ զարդարելով պատրաստեցիր իբրեւ անմատչելի լուսոյն առագաստ, եւ անոր բնակիչ՝ հրեղէն հրեշտակաց դասակարգութիւնները գերապանծ փառաւորութեամբ:

Երկրորդին մէջ Ադամայ ստեղծուիլը.

«Անճառահրաչ զօրութեամբ ստեղծեր զԱդամ պատկեր տիրական, եւ նագելի փառօք զգեստաւորեցեր, ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Անպատմելի եւ հրաշալի կարողութեամբ ստեղծեցիր զԱդամ ի պատկեր Տեառն Աստուծոյ, եւ սքանչելի փառքով զարդարած դրիր զնա Ադինն դրախտին մէջ, այն ուրախութեան եւ ցնծութեան տեղը:

«Չարչարանօք քո Սուրբ Միածնիդ, նորոգեցան արարածք ամենայն. եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Երրորդին մէջ Քրիստոսի չարչարանօքն եղած փրկագործութիւնը.

Չորրորդին մէջ Հոգւոյն սրբոյ առաքելոց վերայ իջնելը. եւ միւս տուններուն մէջ քահանայական զգեստուց յիշատակութիւնն ու խորհուրդները:

Քու Սուրբ Միածին Որդւոյդ չարչարանօքը բոլոր արարածներդ նորոգուեցան, եւ մարդս նորէն իւր անմահութիւնը ձեռք ձգեց ու անկապտելի հագուստով զարդարուեցաւ:

«Անձրեւածին բաժակ հրահոսան, որ հեղեր յԱռաքեալսն ի սուրբ Վերնատանն. հեղ եւ ի մեզ Հոգիդ Սուրբ Աստուած, ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն:

Ծնորհաց անձրեւը կրակի պէս թափող բաժակ, դուն որ սուրբ վերնատան մէջ առաքելոց վրայ թափուեցար, ո՛վ սուրբ Հոգիդ Աստուած, թափէ նաեւ մեր վրայ այն պատմուճանին հետ քու իմաստութիւնդ:

«Տան քում վայելէ սրբութիւն, որ զգեցար զվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ. պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

Քու տանդ յիւաւի սրբութիւն կը վայելէ, վասն զի քու հագուստդ ալ վայելչութիւն է եւ սրբութիւնն ու փառքը գօտիի պէս մէջքդ պատած ես. ճշմարտութեամբ պատէ ամրացուր մեր մէջքը:

«Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդդէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Դու որ քու արարչական ձեռքերդ աստեղաց դէմ տարածեցիր, ոյժ ու ամրութիւն տուր մեր ձեռքերուն, որ երբ վեր վերցնենք՝ կարողանանք արժանապէս միջնորդ լինել առ քեզ:

«Իւսմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս եւ զգայարանս՝ խաչանիչ ուրարմամբ ըստ Ահարովնի, ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանին:

Մեր գլուխը թագ եւ պսակ դնելով՝ մեր միտքն ու զգայարանքը պատէ խաչածեւ ուրարով մը՝ Ահարոնի ուրարին նման, որ ոսկեթել ծաղիկներով բանուած էր ի վարդ խորանին վկայութեան:

«Րամից բոլորից տիրապէս Աստուած պետական, նափորտապարտ սիրով զմեզ զգեստաւորեցեր՝ քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:»

Տէր Աստուած, իշխան եւ արարիչ ամենայն արարածոց, դու միայն ես որ զգեստաւորեցիր զմեզ սուրբ սիրով իբրեւ շուրջաւով, որպէս զի արժանապէս ծառայենք քու սուրբ խորհրդոյդ:

«Թագաւոր երկնաւոր, զԵկեղեցի քո անշա՛րժ պահեա, եւ զերկրպագուս անուանդ քում՝ պահեա՛ ի խաղաղութեան»:

Թագաւոր երկնաւոր, Եկեղեցիդ անասա՛ն պահէ, եւ քեզ պաշտողները պահէ խաղաղութեան մէջ:

ՍԿՁԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Հարց. Ի՞նչ նշանակութիւն ունի քահանային ձեռք լուանալը՝ խորան ելնելէն առաջ.

Պատ. Ինչպէս որ սովորութիւն է խորան նստելէն առաջ ձեռք լուանալ, նոյնպէս պէտք է սուրբ եւ մաքուր սրտիւ (որոյ օրինակ է ձեռաց լուացքումնքը) սուրբ սեղանոյն մերձենալ, ինչպէս որ կ'ըսէ քահանան.

«Լուացից սրբութեամբ զձեռս իմ, եւ շուրջ եղէց զսեղանով քով Տէր»:

Պիտի լուամ իմ ձեռքերս անմեղութեամբ եւ քու սեղանիդ շուրջ-բոլորը պիտի դառնամ, ո՛վ Տէր:

Հարց. Այն սաղմոսին միւս տուներն ալ խորհրդաւոր են.

Պատ. Այո, եւ իրարու հետ գեղեցիկ կապակցութիւն ունին, որոնց գլխաւոր իմաստն այս է որ Աստուծոյ մօտենալ ուզողը պէտք է հեռանայ ի մեղաց եւ յանգեղջ մեղաւորաց:

Հարց. Ինչո՞ւ համար սուրբ Աստուածածնի բարեխօսութիւնը կը խնդրէ ժամարարը պատարագին սկիզբէն.

Պատ. Անոր համար որ կը ճանչնայ իւր եւ ժողովրդեան մեղաւորութիւնն ու անարժանութիւնը, ուստի սրբոյ Կուսին եւ ամենայն սրբոց բարեխօսութիւնը մէջ կը բերէ, որպէս զի դիւրաւ ընդունի յԱստուծոյ մեղաց թողութիւն, եւ սուրբ խորհուրդը արժանապէս կատարելու համար պէտք եղած շնորհքը, ուստի սարկաւագին քարոզած յորդորանքէն ետք կ'ըսէ.

«Ընկա՛լ, Տէր, զաղաչանս մեր, բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, (կամ որոց այսօր է յիշատակ). լո՛ւր մեզ, Տէր, եւ այլն»:

Տէր, ընդունէ՛ մեր աղաչանքները՝ սուրբ Աստուածածինին, քու Միածին Որդիիդ անարատ ծնողին բարեխօսութեամբ, եւ խնդրանքովը բոլոր սուրբերուն, եւ այսօրուան յատուկ շնորհքովը (կամ եւ անոր որուն յիշատակն է այսօր): Լսէ՛ մեզ, Տէ՛ր, եւ այլն:

Հարց. Ի՞նչու համար ժամարարը Խոստովանիմը ժողովրդեան առջեւ կ'ըսէ:

Պատ. Որպէս զի մաքրուի մեղքերէն եւ ուրախութեամբ ու վստահութեամբ մօտենայ սուրբ սեղանոյն:

Հարց. Ի՞նչ ձեւով է այն Խոստովանիմը:

Պատ. Այսպէս. «Խոստովանիմ՝ առաջի Աստուծոյ եւ սրբուհւոյ Աստուածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր հարք եւ եղբարք, զամենայն մեղս զորս գործեալ եմ. քանզի մեղայ խորհրդով՝ բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ: Մեղայ, մեղայ: Աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն»:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ պատասխան կուտայ քահանային:

Պատ. Վարդապետին կամ աւագ քահանային եւ կամ դպրապետին բերնովը կը մաղթէ որ ողորմի իրեն Աստուած, թողութիւն տայ մեղքերուն, շնորհացը մէջ հաստատուն պահէ, եւ յաւիտենական կենաց արժանի ընէ:

«Ողորմեսցի՛ քեզ Աստուած հօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց անցելոյն եւ այժմուս, եւ յառաջակայէն փրկեսցէ եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս, եւ հանգուցէ զքեզ ի հանդերձեալ կեանսն: Ամէն»:

Հարց. Քահանան ի՞նչ խօսքերով կ'ընդունի ժողովրդեան մաղթանքը:

Պատ. Աստուած զքեզ ազատէ, կ'ըսէ, ամէն մեղքէ եւ փորձանքէ. ժամանակ տայ ապաշխարելու եւ բարեգործութիւններ ընելու, եւ բոլոր ձեր առաջիկայ կեանքը ուղիղ ճանապարհի վրայ դնէ Հոգւոյն սրբոյ շնորհօքը:

«Ազատեսցէ՛ եւ զձեզ մարդասէրն Աստուած, եւ թողցէ զամենայն յանցանս ձեր: Տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս: Ուղղեսցէ եւ զառաջակայ կեանս ձեր շնորհօք Սուրբ Հոգւոյն, հօրն եւ ողորմածն, եւ նմա փառք յաւիտեանս: Ամէն»:

Հարց. Ժողովուրդը ի՞նչպէս կը վերջացնէ իւր մաղթանքը:

Պատ. Կը խնդրէ քահանայէն որ յիշէ զիրենք անմահ Գառին առջեւը՝ սուրբ պատարագին մէջ, այսինքն աղօթք ընէ իրենց համար. եւ քահանան խօսք կուտայ.

«Յիշեսցի՛ր զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ»:

«Յիշեա՛լ լիջիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ»:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ խօսքերով կը յուղարկէ քահանան դէպի սուրբ սեղանը:

Պատ. «Աղաղակեցէ՛ք առ Տէր» սաղմոսն (99, 1-5) ըսելով, որոյ աւելի խորհրդաւոր խօսքերն ասոնք են.

«Աղաղակեցէ՛ք առ Տէր, ամենայն երկիր, ծառայեցէ՛ք Տեառն ուախութեամբ:

Դուք՝ երկրի բոլոր բնակիչներդ, աղաղակեցէք Տիրոջ, ուրախութեամբ ծառայեցէ՛ք Տիրոջ:

Մտէ՛ք առաջի նորա ցնծութեամբ, ծաներուք զի նա՛ է Տէր Աստուած մեր:

Անոր առջեւ ելէ՛ք ցնծութեամբ, գիտցէք թէ ան է մեր Տէր Աստուածը:

Նա՛ արար զմեզ, եւ ոչ մեք էաք, մեք ժողովուրդք եւ խաչն արօտի նորա:

Անիկա ստեղծեց մեզ եւ ո՛չ թէ մենք եղանք. մենք անոր ժողովուրդն ենք եւ անոր արօտավայրի ոչխարները:

Մտէ՛ք անոր դուներէն շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ՝ անոր յարկերը:

Մտէ՛ք ընդ դրունս նորա խոստովանութեամբ, եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն, եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նորա. ազգէ յազգ է ճշմարտութիւն նորա:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Հարց. Քահանան ի՞նչ կերպով ժողովրդէն բաժնուելով բեմը կ'ելլէ.

Պատ. Առաջ սարկաւագին յորդորներով սուրբ եկեղեցին միջնորդ կը բռնէ ու կ'ըսէ. «Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, զսուրբ զհրաշալի եւ գյաղթող գտէրութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քե՛զ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ՝ եւ»:

Յետոյ «Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ» (42, 1-5) ըսելով՝ կ'սկսի դէպի բեմը երթալ եւ սեղանը եյնել, սարկաւագին հետ տուն առ տուն կրկնելով «Դատ արա ինձ, Աստուած» սաղմոսը:

Հարց. Այն սաղմոսին վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պատ. Դաւիթ այն սաղմոսը շարադրած է Սաւուղէն հալածուած ու աքսորուած ժամանակը, երբ կը յուսար որ Երուսաղէմ դառնայ օր մը, եւ Աստուծոյ սեղանոյն առջեւը իւր գոհերը մատուցանէ: Ասոր նման՝ մենք ալ աքսորեալ ենք երկնքէն, որ մեր հայրենիքն է, եւ կը յուսանք այն տեղը հասնիլ, որոյ օրինակ է սուրբ սեղանը:

- Սաղմոսին խօսքերը սոքա են.

«Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Դատ արա ինձ, Աստուած, եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Յազգէ որ ոչ է սուրբ, ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա՛ զիս:

Դու, Աստուած, հօրիչ իմ ես. ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Առաքեա՛, Տէր, զլոյս քո եւ զճշմարտութիւն քո, զի առաջնորդեսցեն ինձ եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

Գոհութիւն՝ն տուէք Տիրոջ եւ օրհնեցէ՛ք անոր անունը,

Տէրը քաղցր է, անոր ողորմութիւնը յաւիտեան է, սերունդէ սերունդ տեւական է անոր ճշմարտութիւնը:

Փա՛ռք Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին. Հիմա եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն

Աստուծոյ սեղանին առջեւ պիտի ելնեմ, Աստուծոյ՝ որ կ'ուրախացնէ երիտասարդութիւնս:

Ո՛վ Աստուած, դատէ զիս եւ դատավճիռիս մէջ իրաւունք տուր ինձի:

Փրկէ՛ զիս անսուրբ ազգէ, մեղաւոր եւ նենգաւոր մարդէն:

Ո՛վ Աստուած, դուն ես որ զիս կը զօրացնես, ինչո՞ւ մոռցար ինչո՞ւ համար ես տրտում թափառիմ, իմ թշնամիէս հալածուած:

Ո՛վ Տէր, քու լոյսը եւ քու ճշմարտութիւնդ զրկէ՛, որպէսզի առաջնորդեն զիս եւ հանեն զիս սուրբ լեռը եւ քու բնակարանդ:

Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած, որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Արդ, ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա՝ «Փրկիչ երեսաց իմոց Աստուած իմ»:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Աստուծոյ սեղանին առջեւ պիտի ելնեմ, Աստուծոյ՝ որ կ'ուրախացնէ իմ երիտասարդութիւնս:

Աստուած, ո՛վ իմ Աստուածս, շնորհակալ պիտի ըլլամ, օրհնելով քեզ:

Ո՛վ իմ հոգիս, ինչո՞ւ տրտում ես հիմա կամ ինչո՞ւ անհանգիստ կ'ընեն զիս, յոյսդ դի՛ր Աստուծոյ վրայ, շնորհակալութիւն յայտնէ անոր, Աստուած է փրկիչը իմ անձիս:

Փա՛ռք Հօր եւ Որդիին եւ Սուրբ Հոգիին. Հիմա եւ միշտ, եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն»:

Հարց. Բեմին վրայ հասնելէն ետքը ի՞նչ աղօթք կ'ընէ քահանան.

Պատ. Առաջ սարկաւագը կը յորդորէ փառք տալ Աստուծոյ որ արժանի ըրաւ զմեզ իւր սուրբ պատարագին մէջ օրհնել եւ փառաւորել զինքը. յետոյ կ'ըսէ քահանան այս աղօթքը.

«Ի յարկի սրբութեան եւ ի տեղոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս. առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշա-նացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիրդիւ երկիրպագանեմք. զսուրբ՝ զհրա-շալի եւ զյաղթող զՏէրութիւնդ քո օրհնեմք եւ փառաւորեմք, եւ քեզ ընդ երկ-նային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Հարց. Ի՞նչ մտքով է կ'ըսէ թէ «Առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս»:

Պատ. Սեղանոյն վրայ դրուած խաչերուն, աւետարաններուն եւ ուրիշ սպասներուն համար:

Հարց. Եկեղեցին կամ սուրբ սեղանը ի՞նչ մտքով քաւարան կ'ըսուին.

Պատ. Այն մտքով, որ մարդիկ սուրբ եկեղեցւոյ մէջ եւ սուրբ սեղանոյն առջեւը իրենց մեղացը քաւութիւն եւ թողութիւն կ'ընդունին ապաշխարութեամբ. եւ մեր լեզուին մէջ այս բառը ուրիշ նշանակութիւն չունի՝ բաց յայսմանէ:

ՍՊԱՍ ԴՆԵԼ ԵՒ ԽՆԿԱՐԿՈՒԹԻՒՆ

Հարց. Վարագոյրը ի՞նչ բանի համար է, եւ այն միջոցին ինչո՞ւ կը քաշուի.

Պատ. Հրէից տաճարին վարագոյրը անոր համար էր որ տաճարին Սրբութիւն սրբոց ըսուած մասը բաժնուէր անով բոլորովին ժողովրդեան կեցած տեղէն. իսկ քրիստոնէութեան ժամանակ՝ միայն անոր համար սահմանեալ է, որ ժամարարին սպաս դնելն ու սուրբ խորհուրդը ճաշակելը ժողովուրդը չտեսնէ ու միտքը իր ընելու աղօթքներէն չցրուի: Յունաց եկեղեցւոյն մէջ վարագոյրին տեղը հաստատուն խաչկալ կամ պատկերակալ (իքօնօս՝ պատկա) կայ, երկու կողմը դռներով. իսկ մեր եկեղեցին ի սկզբանէ հետէ վարագոյր կը գործածէ, որ եւ պատարագին մէջմը սպաս դրուելուն, մէյ մըն ալ ճաշակման միջոցներուն կը քաշուի, եւ յոյժ վայելչապէս:

Հարց. Նարեկացւոյն երկու աղօթքը ո՞վ կ'ըսէ եւ ի՞նչ կերպով.

Պատ. Ազգային սովորութիւն է որ այս երկու աղօթքները եպիսկոպոսը կամ վարդապետը ժամարար որ լինի, կ'ըսէ առ Հոգին սուրբ, սեղանոյն առջեւ ծոնկի եկած: Բայց շատ տեղ ալ սովորութիւն եղած է որ նաեւ քահանաներ ըսեն այն աղօթքները՝ կամ նոյն միջոցին եւ կամ ընթերցուած ին ժամանակը:

Հարց. Քահանան ի՞նչ կերպով սպաս կը դնէ:

Պատ. Ընծայարանին առջեւը գալով՝ սարկաւագին ձեռքէն կ'առնէ, նշխարը - որ մասով՝ այսինքն ժողովրդեան բաժնուելու նշխարներովը հանդերձ մաքուր ափսէի մը վրայ դրուած կ'ըլլայ. - վրան կը խաչակնքէ, կը դնէ նշխարը մաղգմային վրայ, ու կ'ըսէ. «Յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»: որով կը կատարուի Փրկչին մերոյ պատուէրը թէ Զայս արարէք առ իմոյ յիշատակի»: Ոմանք աւելցուցած են այս տեղ շարականին այս խօսքերը.

«Որ յանարուեստ ի յաթոռ բարձրացեալ հանգչի, զմահ խաչի յանձն էառ. վասն ազգի մարդկան. օրհնեցէք, գովեցէք, բարեբանեցէք»:

Յետոյ գինին կ'առնէ՝ խաչածեւ կը լեցնէ սկիհին մէջ ու կ'ըսէ.

«Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: -

Այս խօսքերուն վրայ եւս կ'աւելցնեն ոմանք շարականին հետագայ տունը.

«Որ ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք եւ անմահացան, օրհնեցէք, գովեցէք, բարեբանեցէք»:

Հարց. Այս առաջին ընծայաբերութիւնը ընելու ատեն ի՞նչ աղօթք կ'ընէ քահանան.

Պատ. Յովհան Ոսկեբերան հայրապետին այս աղօթքը:

«Աստուած, Աստուած մեր, որ գերկնաւոր հացդ զՏէր մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի առաքեցեր Փրկիչ եւ կեցուցիչ եւ բարերար, օրհնել եւ սրբել զմեզ. ինքնին դու Տէր օրհնեա՛ եւ այժմ զառաջադրութիւնս զայս: Ընկալ զսա յերկնային քո սեղանդ: Յիշեա՛ որպէս բարերար եւ մարդասէր զմատուցողս, եւ վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց: Զի սուրբ եւ փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ո՛վ Աստուած, Աստուած մեր, դո՛ւն որ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս, որ երկնաւոր հաց ու բոլոր աշխարհիս սնունդն է ուղարկեցիր իբրեւ Փրկիչ եւ կեանք տուող ու

ամէն բարիք պարգեւող, որպէս զի օրհնէ զմեզ ու մաքրէ ի մեղաց, դու ինքն Տէր օրհնէ նաեւ հիմա այս մեր առաջադրած ընծան. ընդունէ զսա քու երկնային սեղանդ: Դուն որ միշտ բարերար ու մարդասէր ես՝ յիշէ այս պատարագը մատուցողները, եւ զանոնք, որոնց համար կը մատուցուի. եւ զմեզ որ քու աստուածային խորհուրդդ կը քահանայագործենք դատապարտութենէ ազատ պահէ: Վասն զի սուրբ եւ փառաւոր ու ամենայն պատուոյ արժանի է Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ փառաց մեծ վայելչութիւնը. այժմ եւ միշտ:

Հարց. Ի՞նչպէս կը վերջացնէ քահանան սպաս դնելու արարողութիւնը.

Պատ. Սկիհը ծածկելու ատեն կ'ըսէ. «Տէր թագաւորեաց» սաղմոսը, յետոյ երեք անգամ վրան խաչակնքելով՝ կ'ըսէ այս խորհրդաւոր խօսքը. «Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»: Յետոյ սարկաւագին ձեռքէն կ'առնէ բուրվառն ու կը խնկարկէ սուրբ սպասուն ըսելով.

Այս խօսքը շատ հին ձեռագիրներուն մէջ չգիտնուիր:

«Խոունկ մատուցանեմ առաջի քո Քրիստոս բուրումն հոգեւորական: Ընկալ ի սուրբ յերկնային եւ յիմանալի քո մատուցարանդ ի հոտ անուշից: Առաքեա՛ առ մեզ փոխանակ զչնորհս եւ զպարգեւս Հոգւոյդ սրբոյ. եւ քեզ մատուցանեմք ըզփառս ընդ Հօր եւ ընդ Հոգւոյդ սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Քրիստոս Աստուած մեր, քու առջեւդ այս խոունկը կը մատուցանեմ՝ ոչ այնչափ իբրեւ նիւթական, որչափ իբրեւ հոգեւոր անուշահոտութիւն. ընդունէ զսա քու սուրբ եւ իմանալի աննիւթ սեղանդ հաճոյական բուրման պէս: Ասոր տեղը յուղարկէ մեզի Հոգւոյդ սրբոյ շնորհքն ու պարգեւները, եւ մենք կը մատուցանենք քեզի՛ Հօր եւ Հոգւոյդ հետ, փառք եւ:

Եւ խնկարկելով սեղանոյն՝ կ'իջնէ բեմէն սարկաւազներուն հետ, ժողովրդեան մէջ թափօրապէս կը քալէ ու խնկարկուծիւն կ'ընէ:

Հարց. Խնկարկուծիւնը ի՞նչ խորհուրդ ունի.

Պատ. Խնկարկուծեան սովորութիւնը առաքելական ավանդութեամբ հաստատուած է եկեղեցւոյ մէջ՝ իբրեւ արտաքին նշան սրտաբուղիս եւ ջերմեռանդ աղօթից հաւատացելոց: Ուստի եւ պատարագին խնկարկուծեան ատեն դպիրները այս իմաստալից ու գեղեցիկ երգը կ'երգեն.

Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարի: Ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտաման պաղատանաց յառաջիկայ սուրբ Պատարագիս. խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ի վերնայարկ սրահս խորանիս: Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր որպէս բուրումն անուշահոտ խնկոց ստաշխից եւ կինամոնաց. եւ զմատուցողս պահեա սրբութեամբ, միշտ եւ հանապազ քեզ սպասաւորել:

Բարեխօսութեամբ Մօր քո եւ Կուսի, ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:

Մենք որ Աստուծոյ այս տաճարիս մէջ, որ ուխտ եւ աղօթք նուիրելու տեղ է, հաւաքուելու ենք որպէս զի առաջիկայ սուրբ պատարագիս խորհուրդը պաղատանքներով կատարենք, ահա անուշահոտ խոունկեր ծխելով ու պար պար բռնելու պէս խումբ կազմած կը քալենք այս խորանիս վերնայարկին սրահներուն մէջ: Միրով ընդունէ Տէր՝ մեր ուղղութեամբ սրտի մատուցած աղօթքը՝ անուշահոտ խնկոց, ստաշխներու ու կինամոններու բուրմանցը նման. եւ զմեզ որ այս աղօթքները կը մատուցանենք՝ պահէ պահպանէ որ միշտ եւ հանապազ սրբութեամբ ծառայենք քեզի: Քու մօրդ սրբոյ Կուսին բարեխօսութեամբը ընդունէ քու պաշտօնէիցդ աղաչանքը:

Որ գերագոյն քան գերկինս պայծառացուցեր սուրբ գեկեղեցի Արեամբ քո Քրիստոս. եւ ըստ երկնայնոցն կարգեցեր ի սմա զդասս Առաքելոց եւ Մարգարէից սուրբ Վարդապետաց, այսօր ժողովեալ դասք քահանայից,

սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց, խոունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ հնումն Զաքարիայ: Ընկալ առ ի մէնջ զինկանուէր մաղթանս, որպէս զպատարագն Աբելի գնոյի եւ զԱբրահամու. բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայց:

Դուն որ սուրբ եկեղեցին երկինքէն աւելի գերագանց կերպով պայծառացուցիր քու սուրբ արեամբդ, Քրիստոս Փրկիչ մեր, եւ երկնային հրեշտակաց նման կարգ կարգ դասաւորեցիր ասոր մէջ առաքեալները, մարգարէները, սուրբ վարդապետները, այսօր ժողովուելու ենք դաս դաս քահանայք, սարկաւագունք, դպիրք եւ ուրիշ եկեղեցականք, ու խոունկ կը մատուցանենք քու առջեւդ Տէր հին օրինաց մէջի Զաքարիա քահանային նման: Ընդունէ մեզմէ մեր խոունկերով հանդերձ մատուցած աղօթքները, ինչպէս որ ընդունեցար Աբելի, Նոյի եւ Աբրահամու պատարագները: Քու վերին զօրացդ, հրեշտակաց բարեխօսութեամբը հաստատ ու անշարժ պահէ միշտ Հայկազանցս աթոռը:

Խնդա յոյժ դուստր լուսոյ մայր սուրբ կաթողիկէ մանկամբք քո Սիոն. զարդարեայ պճնեա, հարսն պանծալի, երկնանման լուսաճեմ խորան. զի օժեալն

Աստուած՝ էնն ի յէնն, անծախապէս ի քեզ միշտ պատարագի. Հօր ի հաշտութիւն, մեզ ի քաւութիւն բաշխէ զմարմինն եւ զարիւն իւր սուրբ, վասն իւր կատարման սուրբ տնօրէնութեան շնորհել զթողութիւն կանգնողի տաճարիս:

Ձանապական Կոյսն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ ուրախարար, տուք օրհնութիւն նմա հոգեւոր երգով»:

Յնծա եւ ուրախացիր լուսածին սուրբ՝ մայր, կաթուղիկէ եկեղեցի Սիոն, քու գաւակներովդ. գեղեցիկ կերպով հագուէ զարդարուէ պանծալի հարսն, երկնքի նման լուսապայծառ խորան. վասն զի օծեալ Փրկիչն մեր Քրիստոս Աստուած՝ Որդին Աստուծոյ՝ միշտ կը պատարագուի կը զոհուի քու մէջդ առանց պակասելու եւ հատնելու: ՁՀայրն Աստուած մեզի հետ հաշտեցնելու եւ մեր մեղքերը քաւելու համար՝ իւր սուրբ մարմինն ու արիւնը կը բաշխէ, եւ իւր սուրբ տնօրէնութեան ու մարդեղութեան խորհուրդը կատարելով՝ թողութիւն կը շնորհէ այս տաճարս կանգնողին:

Սուրբ եկեղեցին Աստուածածին կը դաւանի զանապական Կոյսն Մարիամ, ուսկից տրուեցաւ մեզի անմահութիւն բաշխող հաց եւ ամէնքը ուրախացնող բաժակը. հոգեւոր երգով օրհնութիւն տուէք իրեն:

Հարց. Մինչեւ խնկարկութեան վերջանալը պատարագին ո՞ր մասը կը համարուի.

Պատ. Մինչեւ թափօրէն վերջը ու քահանային նորէն բեմ ելնելը կրնայ համարուիլ իբրեւ պատրաստութիւն մատուցման սուրբ պատարագին:

ԺԱՄԱՄՈՒՏ

Հարց. Բուն պատարագը ի՞նչ խօսքով կ'սկսի:

Պատ. Քահանային ըսելովը թէ «Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Հարց. Սարկաւագին ժամանակ առ ժամանակ «Օրհնեա Տէր» ըսելը ի՞նչ կը նշանակէ.

Պատ. Սարկաւագը հրեշտակաց պաշտօնը կը կատարէ, ինչպէս որ դպիրք եւս իրենց ըսածները ժողովուրդին կողմէ կ'երգեն ու կ'ըսեն: Ամէն անգամ որ հարկ կը համարուի քահանային օրհնութիւնը առնուլ, կամ աղօթք մը ըսել տալ իր ժողովուրդին համար, սարկաւագը կը խնդրէ որ ան օրհնութիւն տայ. եւ ահա այն է «Օրհնեա Տէր» ըսածը:

Հարց. Ժամամուտը ի՞նչ է.

Պատ. Ժամամուտ կ'ըսուի այն համառօտ աղօթական ձեւով խօսքը զոր դպիրք կամ որ նոյն է ժողովուրդը կ'ըսեն այս միջոցիս ըստ աւուրն պատշաճի՝ պատարագը սկսելով. ինչպէս է այն հին ու հանդիսաւոր ժամամուտը որ կիրակի օրերը կ'ըսուի, եւ յունարենէ թարգմանուած է.

«Միածին Որդի եւ Բանդ Աստուած» եւ անմահ էութիւն, որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ Կուսէն. անփոփոխելի մարդ եղեալ՝ խաչեցար Քրիստոս Աստուած մեր, մահուամբ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ երրորդութենէն՝ փառաւորակից ընդ Հօր եւ սրբոյ Հոգւոյն. կեցո զմեզ»:

Հարց. Ի՞նչ կը նշանակէ այն խօսքն որ սարկաւագը շատ անգամ կը քարոզէ թէ «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»:

Պատ. Յորդոր է ժողովուրդին որ խնդրեն Աստուծո՛վ հոգեւոր եւ մարմնաւոր խաղաղութիւն. վասն զի միայն խաղաղութեամբ եւ սրբութեամբ սրտի եղած աղօթքն է ընդունելի Աստուծոյ. ուստի եւ խօսքերուն միտքը այս է թէ «Կրկին եւ կրկին (նորէն նորէն) աղաչենք զԱստուած որ խաղաղութիւն պարգեւէ մեզի»:

Հարց. Ի՞նչ կը նշանակէ քահանային դէպի ժողովուրդը դառնալն ու խաչակնքելով ըսելը, «Խաղաղութիւն ամենեցուն», կամ «Խաղաղութիւն ընդ ամենեսեան»:

Պատ. Քահանան ստէպ ստէպ Խաղաղութիւն այսինքն ողջոյն կուտայ ժողովուրդին, որպէս զի պատշաճական լուծութեամբ, մտադրութեամբ ու վայելչութեամբ աղօթքի կենան ամէնքը, եւ ջերմեռանդ աղօթիւք մասնակից լինին պատարագի մատուցմանը: Միանգամայն ժողովրդեան վրայ խաչակնքելովը, Աստուծոյ կողմանէ օրհնութիւն կուտայ ամենուն:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կերպով կ'ընդունի քահանային տուած խաղաղութիւնը:

Պատ. Երեսը կը խաչակնքէ ու դպրաց հետ ի միասին շնորհակալութեան ձեւով կը պատասխանէ ողջունին, «Եւ ընդ հոգւոյդ քում»: այսինքն մեզի տուած խաղաղութիւնդ կամ ողջոյնդ լինի նաեւ քու վրայ:

Հարց. Սարկաւազը ի՞նչ կ'ըսէ անոր պատասխան.

Պատ. «Աստուծոյ երկրպագեսցուք» այսինքն՝ ամէնքս միաբան երկրպագութիւն ընենք Աստուծոյ:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կը պատասխանէ.

Պատ. «Առաջի քո Տէր». այսինքն՝ Տէր, անոր համար եկեր ենք քու առջեւդ որ երկրպագութեամբ եւ աղօթիւք փառաւորենք զքեզ:

Հարց. Երկրպագութիւնը քանի՞ կերպով կը լինի.

Պատ. Բուն երկրպագութիւնը՝ ինչպէս որ խօսքն ալ կը ցուցնէ՝ գետինը տարածուելով համբուրելն է, ըստ հին եւ նոր սովորութեան ամենայն արեւելեանց: Բայց երկրպագութիւն կը համարուի նաեւ կէս մէջքէն ծռիլը, ծնրադրութիւն ընելը, երեսը խաչակնքելով գլուխ խոնարհեցնելը, եւ այլն:

Հարց. Քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ ժամամուտէն յետոյ.

Պատ. «Տէր Աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի: Որոյ ողորմութիւնդ անչափ է. եւ գթութիւնդ անբաւ: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեա՛ ի ժողովուրդս քո՝ եւ ի տաճարս այս սուրբ: Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն. զի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Տէր Աստուած մեր, քու ամենակարող զօրութիւնդ արարածական խելքով չքննուիր, եւ քու փառացդ մեծութեանը խելք չհասնիր. քու ողորմութիւնդ չափ չունի, եւ ոչ գթութիւնդ սահման. դուն քու առատ մարդասիրութեամբդ նայէ քու ժողովրդեանդ եւ այս սուրբ տաճարիս վրայ, եւ տուր մեզի եւ մեր աղօթակիցներուն առատապէս քու ողորմութիւնդ ու գթութիւնդ. վասն զի քեզի կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ:

Հարց. Այն միջոցին որ դպիրները ըստ աւուր պատշաճի շարական կ'երգեն, քահանան վերը ի՞նչ կ'ընէ.

Պատ. Ի ծածուկ կ'ըսէ ետեւէ ետեւ երեք աղօթք:

Հարց. Ինչո՞ւ համար քահանան պատարագի աղօթքներէն մէկ քանին ձայնով կ'ըսէ եւ մէկ քանին ծածուկ կամ առանձին.

Պատ. Նախ՝ թէպէտ քահանան ծածուկ կ'ըսէ մէկ քանի աղօթքները, բայց նոցա իմաստները սարկաւազին ու դպրաց ըսածներուն ընդհանրապէս նման ըլլալով՝ հարկ չհամարուիր անոր բարձրաձայն ըսելը ամէն աղօթք: Երկրորդ, աղօթքներէն մէկ քանին ծածուկ ըսելով՝ աւելի զբաղած կ'ըլլայ միտքը աղօթական խօսքերու՝ մինչդեռ դպիրք եւ սարկաւազունք թէպէտեւ ուրիշ բայց խորհրդոյն յարմար բաներ կ'երգեն: Եւ երրորդ, քահանային աղօթքներն ու դպրաց եւ սարկաւազաց ըսածները հետզհետէ ըսուելով՝ կրնային չափազանց երկարել պատարագը, անոր համար անոնց մէկ մասը ծածուկ կ'ըսէ քահանան:

Հարց. Ուրեմն ըստ ինքեան արգիլուած չէ ժողովուրդին լսել կամ գիտնալ քահանային ծածուկ աղօթքները:

Պատ. Ոչ ամենեւին. ընդհակառակն լաւը գիտնալն ու լսելն է եթէ կարելի ըլլայ. վասն զի անոր ըսած գրեթէ ամէն աղօթքներն ալ բոլոր ժողովուրդին կողմէ կամ ամենուն համար են:

ԵՐԵՔՍՐԲԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հարց. Երեքսրբեան փառաբանութիւնը ի՞նչ կերպով կ'ըլլայ:

Պատ. Նախ քահանան առանձնական աղօթքով մը կը խնդրէ յԱստուծոյ որ սուրբ հրեշտակներն եւս փառաբանակից ըլլան մեզ, եւ այս են խօսքերը.

«Տէր Աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս եւ զինուորութիւնս հրեշտակաց եւ հրեշտակապետաց ի սպասաւորութիւն փառաց քոց, արա այժմ ընդ մուտս մեր մտանել եւ սրբոց հրեշտակաց, եւ լինել պաշտօնակից մեզ եւ փառաբանակից քում բարերարութեանդ»:

Հարց. Այն աղօթքէն վերջը քահանան ինչո՞ւ համար պատճառական ձեւով մը կ'ըսէ ձայնիւ. «Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն, եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Պատ. Սովորութիւն է որ պատարագին մէջի քանի մը աղօթքները թէպէտ ծածուկ կ'ըսէ քահանան, բայց ամէն մէկուն վերջին կտորը ձայնով կ'ըսէ. այնպէս է նաեւ այս Զի քո է կարողութիւնը որ է վերջաւորութիւն վերոգրեալ աղօթքին:

Հարց. Ի՞նչպէս կ'սկսի երեքսրբեան փառաբանութեան հանդէսը:

Պատ. Սարկաւազը կը քարոզէ ժողովրդեան եւ կ'ըսէ. «Պոսիւսում է»:

Հարց. Պոսիւսում էն ի՞նչ լեզուով է եւ ի՞նչ կը նշանակէ:

Պատ. Յունաց Բոսէ'իսմէն բառն է, որ կը նշանակէ ո՛ւշ դնենք:

Հարց. Ի՞նչ պատճառաւ օտար լեզուով կ'ըսուին եկեղեցական պաշտամանց մէջ քանի մը բառեր:

Պատ. Առաքելոց ժամանակէն սովորութիւն եղած է ամենայն եկեղեցեաց մէջ եւս՝ մի քանի եբրայական եւ յունական բառեր գործածել, որպէս զի չմոռցուի թէ ճշմարիտ աստուածապաշտութեան կարգերուն մեծ մասը ի սկզբան այս լեզուներով գրուած են. եւ միանգամայն նշան լինի հաղորդակցութեան ամենայն ուղղափառ եկեղեցեաց քրիստոնէից ընդ միմեանս յեկեղեցական մասունս հաւատոյ: - Եբրայեցերէն են սոքա. ալէլուիա, որ է օրհնեցէք զԱստուած. ամէն, որ է եղիցի, եւ ովսաննա, որ է՝ կեցո՛ղմեզ Տէր, կամ փրկեա զմեզ Տէր. եւ յունարէն են. Պոսիւսում է, ո՛ւշ դնենք, օրթի կամ որթի, ուղիղք, այսինքն ուղիղ կենանք մարմնով

եւ հոգևով՝ սաղմոս, մեղեղի, մեսեղի, եպիսկոպոս, երէց, պատրիարք, կաթողիկէ, կաթողիկոս, եւ այլն:

Հարց. Երեքսրբեան փառաբանութիւնը ո՞րն է:

Պատ. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր, (կամ որ յարեար ի մեռելոց) եւ այլն, ըստ աւուրն պատշաճի եւ այլն, ողորմեա մեզ»:

Հարց. Այս Սուրբ Աստուած երգին վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պատ. Թէպէտ այս երգը շատ հին է, եւ ամենայն քրիստոնէից մէջ յարգի է իբրեւ առաքելականդ երգ, բայց այս անվնաս տարբերութիւնը կայ որ Յոյնք եւ Լատինացիք գէթ քանի մը հարիւր տարիէ ի վեր ի դէմս Երրորդութեան կ'երգեն այս երգը, ուստի եւ չեն ըսեր որ խաչեցար վասն մեր, կամ որ յարեար ի մեռելոց, եւ այլն. իսկ մեր Հայաստանեայց եկեղեցին նոյն երգը ի սկզբանէ հետէ ի դէմս Քրիստոսի կ'երգէ ճշմարիտ Աստուած ճանաչելով եւ դաւանելով զնա:

Հարց. Սարկաւագին սուրբ աւետարանը բարձրացնելով ժողովրդեան համբուրել տալը ի՞նչ խորհուրդ ունի:

Պատ. Որովհետեւ յետ սակաւուց աւետարան պիտի կարդացուի, սարկաւագը ժողովրդեան հաւատքը եւ ուշադրութիւնը կ'արթնցնէ՝ սուրբ աւետարանը ամենուն առջեւը բարձրացնելով, եւ ժողովրդեան կամ քահանայից մէջէն պատուաւոր մէկու մը համբուրել տալով:

Հարց. Այն միջոցին քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ ծածուկ:

Պատ. Սրբոյն Բարսեղ Կեսարացի հայրապետի գեղեցիկ մէկ աղօթքը կ'ըսէ, որ է այս.

«Աստուած սուրբ որ ի սուրբս հանգուցեալ ես, եւ երեքսրբեան ձայնիւ սերովբէք գովեն զքեզ եւ քերովբէք փառաբանեն, եւ ամենայն երկնային զօրութիւնք քեզ երկիրպագանեն: Որ ի չգոյէ ի գոյ ածեր զամենայն արարածս. որ արարեր զմարդն ըստ պատկերի քում եւ նմանութեան, եւ ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր, եւ ուսուցեր խնդրել զիմաստութիւն եւ զգօնութիւն: Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եղիր ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան: Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ եւ զանարժան ծառայքս քո ի ժամուս յայսմիկ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քո եւ զօրինաւոր երկրպագութիւն եւ զփառաբանութիւն մատուցանել քեզ: Դու Տէր, ընկալ ի բերանոյ մեղաւորացս գերեքսրբեան օրհնութիւնս, եւ պահեա՛ զմեզ քոյին քաղցրութեամբդ. թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա՛ զհոգի զմիտս եւ զմարմինս մեր, եւ շնորհեա ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ ամենայն սրբոց քոց որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան: Զի սուրբ ես Տէր Աստուած մեր. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Ո՛վ սուրբ Աստուած, դու սրբոց սիրտին մէջ կը հանգչիս, սերովբէք սուրբ սուրբ սուրբ ըսելով զքեզ կ'օրհնեն, եւ քերովբէք կը փառաբանեն, եւ բոլոր երկնային զօրութիւնները քեզի երկրպագութիւն կ'ընեն: Դուն ոչինչէն ստեղծեցիր բովանդակ արարածները, իսկ մարդը ստեղծեցիր քու պատկերիդ նման, եւ ամէն տեսակ շնորհք-ներով զինքը զարդարեցիր, եւ խրատեցիր որ իմաստութեան եւ սրբութեան ետեւէ ըլլայ, եւ երբ որ մեղանչեց քեզի դէմ՝ երեսէ չթողուցիր, հապա փրկաւետ ապաշխարութեան խորհուրդը ապսպրեցիր իրեն: Դու Տէր արժանի ըրիր զմեզ, որ քու անպիտան եւ անարժան ծառայքդ ենք, այս միջոցիս քու փառացը սուրբ սեղանին առջեւ կենալ, եւ քեզի օրինաւոր երկրպագութիւն եւ փառաբանութիւն մատուցանել: Ուրեմն դու ընդունէ մեղաւորացս բերնէն այս երեքսրբեան օրհնութիւնը, եւ պահէ պահպանէ զմեզ քու քաղցր մարդասիրութեամբդ. թող մեզի, մեր բոլոր յանցանքները ինչ որ կամաւ եւ ակամայ գործեր ենք: Սրբէ եւ մաքրէ մեր հոգին, միտքը եւ մարմինը, եւ արժանի ըրէ զմեզ սրբութեամբ պաշտել քեզ բոլոր մեր կեանքին մէջ, բարեխօսութեամբ սուրբ

Աստուածածնին եւ ամենայն սրբոց որ ի յաւիտենից Հաճոյացան քու ամենաբարի կամացոյ: Վասն զի դուն սուրբ ես, Տէր Աստուած մեր, եւ քեզի կը վայելէ ամենայն փառք իշխանութիւն եւ պատիւ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

ԱԻԵՏԱՐԱՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՄՔ

Հարց. Երեքսրբեան փառաբանութենէն յետոյ պատարագին ո՞ր մասը կ'սկսի.

Պատ. Մարգարէական եւ առաքելական գիրքերու եւ յետոյ աւետարանի ընթերցումներ:

Հարց. Ի՞նչ կերպով կ'սկսի այս մասը.

Պատ. Մարկաւագը կը քարոզէ ժողովրդեան տուն առ տուն՝ թէ որուն եւ ի՞նչ բանի համար պէտք է աղօթք ընեն. այսինքն աշխարհիս խաղաղութեան, եկեղեցւոյ հաստատութեան, եկեղեցւոյ առաջնորդաց եւ քահանայից, եւ թագաւորաց կենդանութեանն ու փրկութեանը համար, ժողովուրդն ալ ամէն մէկուն պատասխան կուտայ «Տէր ողորմեա» ըսելով, որ հին եւ սքանչելի աղօթք է համառօտ:

Յետոյ կը յորդորէ ժողովրդեան որ խնդրեն յԱստուծոյ՝ որպէս զի այս սուրբ պատարագին ժամանակ եւ առաջիկայ օրը խաղաղութեամբ անցընեն. «Զժամ սուրբ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել՝ հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք»: Ժողովուրդն ալ կ'ըսէ. «Շնորհեա Տէր»:

Դարձեալ խնդրենք, կ'ըսէ, որ խաղաղութեան հրեշտակ մը պահապան լինի մեզի- «Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»:

Խնդրենք որ Աստուած քաւութիւն եւ թողութիւն շնորհէ մեր մեղքերուն. - «Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»:

Խնդրենք որ սուրբ խաչին մեծ ու զօրաւոր ոյժը մեզի օգնական ու պահապան լինի- «Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»: Ժողովուրդը կ'ըսէ ամէն մէկուն. «Շնորհեա Տէր»:

Դարձեալ ամէնքս միաբան աղաչենք զԱստուած որ հաստատ պահէ մեր սուրբ եւ ճշմարիտ քրիստոնէական հաւատքը- «Եւ ես միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչեսցուք»: Ժողովուրդը կ'ըսէ. «Տէր ողորմեա»:

Մենք զմեզ եւ իւրաքանչիւրս յանձնենք Աստուծոյ որ ամէն բանի կարող է- «Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք»:- Ժողովուրդը կը պատասխանէ. «Քեզ Տեառնդ յանձն եղիցուք- Այո՛ Տէր, քեզի յանձնուած ու ապաւինած ենք»:

Մարկաւագը կը վերջացնէ իր յորդորները աղօթական ձեւով՝ ըսելով առ Աստուած. Ողորմէ մեզի, Տէր Աստուած մեր՝ քու մեծ ողորմութեանդ չափովը- «Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր՝ ըստ մեծի ողորմութեան քում». եւ առ ժողովուրդը կ'ըսէ. «Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ»: Ժողովուրդն ալ պատասխան կուտայ՝ երեք անգամ՝ Տէր ողորմեա ըսելով:

Այս միջոցին քահանան այս համառօտ աղօթքը կ'ըսէ.

«Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս եւ ողորմեսցիս ըստ մեզի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեա ի վերա մեր եւ ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ»:

Տէր Աստուած մեր, քու ծառայիդ բազկատարած աղաչանքը ընդունէ, եւ ըստ մեծի ողորմութեանդ ողորմէ մեզի: Ղրկէ քու գլխութիւնդ մեր վրայ ու բոլոր այս ժողովրդեան վրայ, որ քեզմէ կը սպասեն յուսով առատ ողորմութեանդ:

Հարց. Բազկատարած աղօթքը ո՞րն է.

Պատ. Այն բնական եւ հին ու գեղեցիկ աղաչանքի ձեւն է՝ որով մարդ երկու ձեռքը տարածած, կամ քիչ շատ բացած, ջերմեռանդ սրտով կը մատուցանէ Աստուծոյ իւր խնդրանքները:

Հարց. Ընթերցուածները ի՞նչ խորհրդով եւ ի՞նչ կարգով կը կարդացուին.

Պատ. Մեր եկեղեցւոյն կանոնովը՝ ըստ հին սովորութեան ամենայն եկեղեցեաց՝ առաջ հին կտակարանէն օրուան խորհրդոյն յարմար հատուած մը կը կարդացուի, յետոյ գործք առաքելոցէն կամ առաքելական թղթերէն կամ նամակներէն, եւ այլն՝ ժողովրդին առջեւը՝ գրակալով:

Ընթերցուած կարդացողը առաջ կ'ըսէ. «Ալէլուիա, ալէլուիա». այսինքն օրհնեցէք զԱստուած, փառք տուէք Աստուծոյ որ հին եւ նոր կտակարանին մէջ իր ճշմարտութիւնը եւ սուրբ կամքը յայտնեց է մեզի. հետն ալ ընթերցուածին յարմար որոշուած սաղմոսին մէկ կամ երկու տունը կ'ըսէ, եւ կ'սկսի կարդալ:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կերպով մտիկ կ'ընէ ընթերցուածները.

Պատ. Հանդարտ կեցած կամ նստած, եւ մեծ ուշադրութեամբ:

Հարց. Ընթերցուածէն վերջը ի՞նչ կ'ըսուի.

Պատ. Դպիրները երգով կ'ըսեն դարձեալ, «Ալէլուիա, ալէլուիա», եւ սաղմոսէն տուն մը ըստ աւուրն պատշաճի. եւ սարկաւազը կրկնելով կ'ըսէ. «Ալէլուիա, օրթի». այսինքն օրհնեցէք զԱստուած, եւ ուղիղ կեցէք հոգւով. եւս եւ մարմնով՝ ոտքի ելէք, ոտքի վրայ կանգնած մտիկ ըրէք աւետարանը որ այժմ պիտի կարդացուի:

Հարց. Քահանան այն միջոցին ի՞նչ կ'ընէ.

Պատ. Կը դառնայ կը խաչակնքէ ժողովրդեան վրայ ու խաղաղութիւն կուտայ. ժողովուրդն ալ կ'ըսէ իր սովորական պատասխանովը, «Եւ ընդ հոգւոյդ քում»:

Հարց. Աւետարանի ընթերցումը ի՞նչ կերպով կ'սկսի.

Պատ. Առաջ սարկաւազը կը քարոզէ ամենուն թէ «Երկիւղածութեամբ լուարուք». այսինքն ահիւ եւ դողութեամբ մտիկ ըրէք: Իսկ աւետարանը կարդացողը, որ է միւս սարկաւազը կամ թէ սարկաւազ չգտնուած ատենը քահանան, վրայ կը բերէ թէ. «Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մատթէոսի. (կամ Մարկոսի կամ Ղուկասու, կամ Յովհաննու)». այսինքն այս աւետարանիս մտիկ ըրէք որ Մատթէոսի (կամ Մարկոսի, Ղուկասու, Յովհաննու) գրածն է:

Երբ որ ժողովուրդը Աստուծոյ փառք տալով կը յայտնէ իւր յօժարակամ պատրաստութիւնը, եւ կ'ըսէ. «Փառք քեզ Տէր Աստուած մեր», սարկաւազը դարձեալ կը պատուիրէ ու կ'ըսէ. «Պուսխումէ», ո՛ւշ ղնենք. եւ ժողովուրդը յայտնելով իւր դաւանանքը, որով կը հաւատայ թէ սուրբ աւետարանը Աստուծոյ խօսքն է, պատասխան կուտայ թէ «Ասէ Աստուած» եւ այնպէս պատկառանքով եւ մտադրութեամբ կը լսէ սուրբ աւետարանը: Իսկ երբ վերջնայ աւետարանին ընթերցումը, նորէն փառք կուտայ Աստուծոյ՝ որ իր կամքը եւ ճշմարտութիւնը յայտնեց է մարդկանց սուրբ աւետարանով:

Հարց. Աւետարանէն յետոյ ի՞նչ պատճառի համար Հաւատամք կ'ըսուի.

Պատ. Որպէս զի ժողովուրդը հաստատուի իր հաւատքին մէջ զոր ունի աւետարանին խօսքերուն եւ պատարագի սուրբ խորհրդոյն:

Հարց. Ժողովուրդը Հաւատամք ըսելու ատեն ինչո՞ւ ձեռնամած կը կենայ:

Պատ. Ձեռնամած կենալով աղօթելը բնական նշան է սաստիկ ուշադրութեան եւ ջերմեռանդութեան, եւ կը ցուցնէ թէ ինչպէս որ մարդուս ձեռքը այն ձեւով ազատ կը մնայ ուրիշ ամէն գործողութենէն, այսպէս ալ միտքը ազատ է այն միջոցին ուրիշ ամէն զբաղմունքէ եւ թէ Հաւատքին մէջ բոլորը միացած են:

Հարց. Մինչեւ ո՞ր ատեն ձեռնամած կը կենայ ժողովուրդը:

Պատ. Սովորաբար մինչեւ «Իսկ որք ասեն» կտորը, որ բուն Հաւատամքին մասը չէ:

Հարց. Հաւատացելոց պատարագ ըսուած մասը ե՞րբ եւ ի՞նչ կերպով կ'սկսի:

Պատ. Հաւատամքէն ետքը սարկաւազը կը քարոզէ ժողովուրդեան, ու կը խրատէ որ Հաւատքով խնդրեն Աստուծոյ իրենց մեղքերուն թողութիւն եւ ամէն տեսակ շնորհք եւ ողորմութիւն, հետեւեալ խօսքերով.

«Եւ եւս Հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան նորա. եւ նա տացէ մեզ միաբան՝ միով Հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարեաց: Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ, կեցուցէ եւ ողորմեսցի»:

Դարձեալ Հաւատով աղաչենք եւ աղօթենք առ Տէրն մեր եւ Աստուծ եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս այս ժամ պատարագիս միջոցին, որ արժանի Համարի մեր աղօթքն ընդունել, եւ մեր աղաչանաց ձայնին մտիկ ընէ, մեր սրտանց ըրած պաղատանքները լսէ, մեր մեղքերուն թողութիւն տայ, գթայ եւ ողորմի մեզի: Մեր աղօթքն ու խնդրանքները ամէն ժամանակ անոր մեծ տէրութեան առջեւ ելնեն. եւ ան տայ մեզի միաբանական հոգևով, մի միայն Հաւատով եւ արդար վարք անցնելով աշխատիլ բարի գործերու, այնպէս որ իր ողորմութեան շնորհքները անպակաս ընէ մեր վրայէն ամենակալն Աստուծ, եւ ինքը փրկէ զմեզ ու ողորմի մեզի:

Հարց. Այն միջոցին ի՞նչ աղօթք կ'ընէ քահանան:

Պատ. «Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս» աղօթքը, որով Աստուծոյ շնորհքն ու ողորմութիւնը կը խնդրէ՝ յիշելով Քրիստոսի Տեառն մերոյ չարչարանաց ու Հոգւոյն սրբոյ գալստեան առատ պարգեւները, որ օրուան այս միջոցին, այսինքն կէսօրուան այս երկու երեք ժամ առաջ պարգեւեցան կ'ըսէ:

«Տէր Մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ ես ողորմութեամբ եւ առատ պարգեւօք բարերարութեան քո: Որ դու քոյին կամաւդ ի ժամուս յայսմիկ Համբերեցեր չարչարանաց եւ մահու յաղագս մեղաց մերոց, եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն. հաղորդս արա եւ զմեզ Տէր աղաչեմք զքեզ, աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց՝ եւ ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ»:

Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս, քու ողորմութիւնդ մեծ է, եւ բարերարութեանդ պարգեւները առատ են: Դուն որ քու կամօքդ այս ժամուս՝ մեր մեղացը Համար Համբերեցիր չարչարանաց եւ մահու, եւ առատապէս պարգեւեցիր Հոգւոյդ սրբոյ պարգեւները երանելի առաքելոց: կ'աղաչենք քեզ Տէր, մասնակից ըրէ նաեւ մեզ աստուածային պարգեւներուդ, այսինքն մեղաց թողութիւն եւ Հոգիդ սուրբ ընդունելու:

Յետոյ աղօթքին վերջի կտորը ձայնով կ'ըսէ.

«Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Որպէս զի արժանի ըլլանք գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից . ամէն»:

Եւ ժողովրդեան խաղաղութիւն տալէն յետոյ ուրիշ աղօթքով մը Քրիստոսի խաղաղութիւնը կը խնդրէ ամենուն համար.

«Խաղաղութեամբ քով Քրիստոս Փրկիչ մեր՝ որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս. ամրացո զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ճշմարիտ երկրպագուս քո՝ որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն. վասն զի ամենա-սուրբ Երրորդութեանդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Քրիստոս Փրկիչ մեր, քու այն խաղաղութեամբդ որ ամէն խելքէ ու խօսքէ վեր է Հաստատէ մեզ ու անվախ պահպանէ ամէն տեսակ չարիքներէ. Հաւասարեցուր մեզ այն քեզի ճշմարիտ երկրպագութիւն ընողներուն որ հոգւով եւ ճշմարտութեամբ կը պաշտեն քեզ. վասն զի քու ամենասուրբ Երրորդութեանդ կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ:

Յետոյ կ'ըսէ, «Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս», եւ սարկաւագին խնդրանքով կը դառնայ կ'օրհնէ ժողովուրդը՝ ըսելով. «Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ»: Ժողովուրդն ալ երեսը խաչակնքելով կ'ընդունի օրհնութիւնն ու կ'ըսէ. «Ամէն»:

ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Հարց. Վերաբերութիւնը ի՞նչ է.

Պատ. Հին ատեն բոլոր ժողովուրդը, այսինքն եկեղեցականներ եւ աշխարհականներ, այրեր եւ կիներ, այս միջոցիս կը բերէին թափօրով հաց ու գինի, կը դնէին Ընծայարան ըսուած սեղանին վրայ. քահանան այս միջոցիս կ'ընդունէր այն ընծաները, յետոյ անոնց մէկ կտորը կ'առնէր սուրբ սեղանը, կը սրբագործէր ի մարմին եւ յարիւն Քրիստոսի, յորմէ կը հաղորդուէին արժանաւորքն, իսկ չհաղորդուողներուն կը բաժնուէին այն ընծայից մնացած կտորները՝ պատարագին վերջերը, որպէս զի անոնք եւս մասնակից համարուին կերպով մը սուրբ սեղանին:

Յետոյ Եկեղեցին ամէն տեղ այս արարողութիւնը թեթեւցուց, եւ մեր ազգին մէջ սովորութիւն եղաւ՝ միայն սրբագործելի նշխարն ու գինին թափօրապէս ժողովրդեան մէջէն անցնելով, եւ կամ սեղանին ետեւէն պտըտցնելով՝ վերաբերել պատուով ու տանիլ տալ քահանային, որ խնկարկութեամբ կ'ընդունի ու սեղանին վրայ կը դնէ: - Այս արարողութիւնը երբեմն աւելի հանդիսով կը կատարուի եւ երբեմն համառօտ:

Հարց. Դպիրներ այն միջոցին ի՞նչ կ'երգեն.

Պատ. Սարկաւագը առաջ կը քարոզէ դպրաց որ քաղցր ձայնով ու ջերմեռանդութեամբ հոգեւոր երգեր, այսինքն սաղմոս, մեղեդի եւ ուրիշ սրտաշարժ տաղեր երգեն. «Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ, զերգս հոգեւորս»: Դպիրներն ալ Սրբասացութիւն ըսուած երգերէն մէկը կ'երգեն ըստ աւուր պատշաճի:

Հարց. Երգեցողութիւնը, այսինքն եկեղեցական պաշտամանց մէջ երգով բան ըսելը ուսկի՞ց մտած է, ի՞նչ խորհուրդ ունի, եւ ի՞նչպէս պէտք է ըլլայ.

Պատ. Երգեցողութիւնը ամէն ժամանակ եղած է Եկեղեցւոյ մէջ թէ հին օրինաց ատենը եւ թէ քրիստոնէութեան, իբրեւ բնական եւ սրտաշարժ զարդ եւ արարողութիւն աստուածային պաշտամանց. եւ պէտք է անպատճառ ըլլայ

ազգային եղանակներով կանոնաւոր կերպիւ, վայելուչ հանդարտութեամբ եւ քաղցր ձայնիւ, ինչպէս որ սուրբ Հարք եւս միշտ կ'ապսպրեն:

Հարց. Հանդիսաւոր վերաբերութիւնն ի՞նչպէս կ'ընեն.

Պատ. Հանդիսաւոր պատարագներու ատեն եղած վերաբերութեան արարողութիւնը այսպէս է: Երբ որ քահանան կ'ըսէ. «Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ», Սարկաւազը կ'երգէ «Սաղմոս ասացէքը», եւ դպիրք Սրբասացութիւնը՝ ոտքի վրայ կեցած: Այնուհետեւ սարկաւազը կ'ըսէ.

«Մի ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս»:

Թող երախաներէն (այսինքն դեռ չկնքուած քրիստոնեաներէն), թերահաւատներէն եւ ապաշխարողներէն ու անմաքուր՝ անսուրբ մեղաւորներէն մէկն ալ չմօտենայ այս աստուածային խորհուրդոյ:

Դպիրք կը պատասխանեն. «Մարմին տէրունական եւ արիւն Փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով՝ Սուրբ. Սուրբ. Սուրբ Տէր զօրութեանց»:

Կը հաւատանք որ մեր Փրկչին տէրունական մարմինը եւ Փրկչական արիւնը սեղանին վրայ է. ուստի երկնային զօրութիւնք (հրեշտակները) աներեւոյթ կերպով կ'երգեն ու անդադար ձայնով կ'ըսեն, սուրբ՝ սուրբ՝ սուրբ Տէր զօրութեանց:

Յետոյ խնկարկելով կ'երթան ընծայարանին առջեւ, ու սարկաւազը կ'ըսէ սաղմոսին այս տունը.

«Յարեւու եհար զխորան իւր. եւ ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառազաստէ իւրմէ»:

Իր խորանը (վրանը) արեւու մէջ դրաւ, եւ ինքը իր առազաստէն ելնող փեսայի կը նմանի:

Դպիրքն. «Եւ ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զճանապարհս իւր»:

Եւ իր ճանապարհէն գացած ատենը հսկայի կը նմանի:

Սարկաւազը կ'սկսի եւ դպիրք առաջ կը տանին, կտոր կտոր երգելով, այս հին ու փառաւոր երգը, որ յունարենէն թարգմանուած է.

«Որք զքրովբէիցն խորհրդաբար կերպարանիմք, եւ կենդանարար Երրորդութեան գերեքսրբեան օրհնութիւնս մատուցանեմք, զամենայն զկենցաղականս ի բաց դնելով զգործս, որպէս զի զթագաւորն ամենեցուն ընդունիցիմք, եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ»:

Մենք որ քերովբէներուն խորհուրդը կը կատարենք, եւ կենդանարար Երրորդութեան երեքսրբեան օրհնութիւնը կը մատուցանենք «սուրբ սուրբ սուրբ ըսելով», բոլոր աշխարհային գործերուն զբաղումները մէկդի կը դնենք, որպէս զի թագաւորներուն թագաւորը ընդունինք, եւ հրեշտակներուն կարգաւորութիւնը հանդիսապէս կատարենք:

Սարկաւազը ընծաները վերցուցած, եւ միւս սարկաւազը առջեւէն խնկարկելով, երբոր կը հասնին շիտակ դէպի արեւելք, կ'ըսէ սկիհը վերցնող սարկաւազը. «ճանապարհ արարէք այնմիկ որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս»:

- Ճանապարհ բացէք այնմ որ երկնից երկինքը կը բնակի դէպի արեւելք:

Դպիրք կ'երգեն. «Եւ կենդանարար Երրորդութեանն» եւ այլն:

Յետոյ կուգան դէպի հարաւ, ու կ'ըսէ սարկաւազը այս սաղմոսը. «Աստուած ի հարաւոյ եկեսցէ, եւ սուրբն ի Փարան լեռնէ»:

Դպիրքն. «Ձամենայն զկենցաղականս իրաց ղնելով ըզգործս»:

Իսկ երբոր խորանին աստիճանին մօտ կուգայ, կ'ըսէ սարկաւազը հանդարտ ձայնով.

«Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր, համբարձցին ղրունք յաւիտենից եւ մտցէ թագաւոր փառաց»:

Ո՛վ իշխանութիւնք երկնից, վեր վերցուցէք ձեր ղուները. վերնան յաւիտենից ղուները որ փառաց թագաւորը երկինք մտնէ:

Քահանան խնկարկելով կը հարցնէ.

Ո՛վ է սա թագաւոր փառաց Տէր հզօր զօրութեանց իւրով Տէր կարող ի պատերազմի»:

Ո՛վ է այս փառաց թագաւորը, այս հզօր եւ զօրաւոր Տէրը, այս պատերազմի մէջ յաղթական Տէրը:

Դպիրքն. «Որպէս զի զթագաւորն ամենեցուն ընդունիցիմք»:

Սարկաւազն «Համբարձէք իշխանք» եւ այլն.

Քահանան. «Ո՛վ է սա թագաւոր փառաց Տէր զօրութեանց»:

Դպիրքն. «Եւ զհրեշտակացն հանդիսապէս ընծայեալ բերեմք զկարգ»:

Սարկաւազն. «Սա ինքն է թագաւոր փառաց»:

Այն ատեն քահանան սկիհին ծածկոյթը կը համբուրէ ու կ'առնէ սարկաւազին ձեռքէն. ժողովրդեան վրայ կը խաչակնքէ անով ու կ'ըսէ. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:

Դպիրքն. «Ալէլուիա»:

Հարց. Առանց թափօրական հանդիսի ի՞նչ կերպով կը կատարուի վերաբերութիւնը.

Պատ. Երբոր սարկաւազը կ'ըսէ Մի՛ ոք յերախայիցը, եւ ղպիրք Մարմին տէրունականը, սարկաւազը կ'երգէ Մաղմոս ասացէքը, եւ ղպիրք ծունկի վրայ եկած՝ Սրբասացութիւնը կ'երգեն: Այն միջոցին սարկաւազը կը խնկարկէ սեղանոյն, յետոյ ընծայից. ձեռքը կ'առնէ սկիհը քօղովը հանդերձ, ու ղէպ ի վեր բարձրացուցած ծանր ծանր քայլելով՝ ղիմացէն ալ խնկարկութիւն ընդունելով կը պտըտի սեղանին ետեւէն, ու ձախակողմեան ղունէն ելնելով՝ կուգայ սեղանոյն աստիճանին քովը. քահանան ալ խնկարկութեամբ կ'ընդունի սուրբ սպասը, կ'օրհնէ անով ժողովուրդը եւ կը ղնէ սեղանոյն վրայ:

Հարց. Սարկաւազը «Մի ոք յերախայից» ըսելով ի՞նչ կ'ուզէ հասկցնել մասնաւորապէս.

Պատ. Կ'ապսպրէ ժողովրդեան (հին սովորութիւնը յիշեցնելով) որ մի գուցէ երախայք, թերահաւատք, ապաշխարողք եւ անմաքուրք ընծայ բերեն սուրբ սեղանոյն:

Հարց. Դպրաց պատասխանը ի՞նչ մտքով է.

Պատ. Դպրաց՝ այսինքն ժողովրդեան տուած պատասխանին իմաստը այս է թէ «Այո, զիտենք եւ կը հաւատանք որ Քրիստոսի Տեառն մերոյ մարմինն եւ փրկական արիւնը արդէն կայ սեղանոյն վրայ սուրբ հաղորդութեան խորհուրդով, եւ այժմ դարձեալ պիտի կատարուի նոյն սուրբ խորհուրդը. մինչդեռ երկնային հրեշտակները առանց մեր աչքին երեւնալու կ'երգեն ու կ'ըսեն «Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց»:

Հարց. Վերաբերութիւնը ի՞նչ մասնաւոր խորհուրդ ունի:

Պատ. . Օրինակ է գալստեանն Քրիստոսի յաշխարհ մարդեղութեամբ, եւ գալստեան նորա ի սուրբ սեղանն՝ Հաղորդութեան խորհրդով:

Հարց. Քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ այն միջոցին՝ երբ դպիրք սրբասացութիւնը կ'երգեն:

Պատ. Քահանան սուրբ սեղանոյն առջեւը խոնարհած, այս աղօթքը կ'ըսէ ի ծածուկ.

«Ոչ ոք արժանի է յըմբռնելոցս մարմնաւոր ախտիւք եւ ցանկութեամբ մատչել ի սեղան քո, կամ սպասաւորել մեծի արքունական փառաց քոց: Քանզի պաշտել զքեզ՝ մեծ եւ ահաւոր՝ երկնաւոր զօրութեանցդ իսկ է. սակայն վասն անչափ բարերարութեան քո՝ անպարագրելի Բանդ Հօր եղեր մարդ, եւ քահանայապետ մեր երեւեցար եւ իբր Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան եւ անարիւն գենման զքահանայութիւն ականդեցեր մեզ: Վասն զի դու ես Տէր Աստուած մեր, որ տիրես երկնաւորաց եւ երկրաւորաց. որ ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս, սերովբէից Տէր եւ թագաւոր Իսրայելի: Որ միայն սուրբ ես եւ ի սուրբս հանգուցեալ, աղաչեմ զքեզ՝ միայն բարերար եւ հեշտալուր, նայեա յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո, եւ սրբեա զհոգի եւ զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին. եւ բաւականացո զիս զօրութեամբ սուրբ Հոգւոյդ, որ զգեցեալ եմ զքահանայական շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, եւ քահանայագործել զքո անարատ մարմինդ եւ զպատուական արիւնդ: Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ՝ մաղթեմ, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինչն, եւ մի՛ մերժեր զիս ի ծառայից քոց այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զայս յինչն ի մեղուցեալ եւ յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես որ մատուցանես եւ մատչիս, եւ ընդունիս եւ տաս, Քրիստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն քո Հարբդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Մեզի պէս մարմնաւոր ախտերով եւ ցանկութեամբ բռնուածներէն մէկն ալ արժանի չէ քու սեղանիդ մօտենալ, եւ կամ քու մեծ ու թագաւորական փառացը սպասաւորութիւն ընել: Վասն զի զքեզ պաշտելը, ո՛վ մեծ եւ ահաւոր Տէր, քու երկնային Հրեշտակացդ գործն է. եւ սակայն քու անհուն բարերարութեամբդ, դուն որ Հօր Աստուծոյ՝ մարդ եղար, եւ մեզի քահանայապետ յայտնուեցար. եւ որովհետեւ Տէր ես յամենայնի եւ ամենեցուն, այս պաշտօնն ու անարիւն գոհիդ քահանայութիւնը մեզի ականդեցիր: Վասն զի դու ես Տէրն ու Աստուածը որ երկնաւոր եւ երկրաւոր արարածոց վրայ կը տիրես, եւ քրովբէական աթոռի վրայ բազմած ես, ո՛վ Տէրդ սերովբէից եւ թագաւորդ Իսրայելի: Դուն որ միայն սուրբ ես եւ սրբոց վրայ կը հանգչիս, կ'աղաչեմ քեզ՝ միայն բարերար եւ քաղցրութեամբ մեր աղօթքը լսող, նայէ իմ վրաս՝ որ քու մեղապարտ ծառադ եմ, եւ սրբէ մաքրէ միտքս չարին ամէն տեսակ պղծութենէն, եւ ոյժ տուր Հոգւոյդ սրբոյ զօրութեամբը ինծի, որ այս քահանայական շնորհքը վրաս առեր եմ, սուրբ սեղանոյն առջեւը արժանաւորապէս կենալու եւ քահանայագործելու քու անարատ մարմինդ ու պատուական արիւնդ: Ահա քու առջեւը վիզս խոնարհեցնելով կ'աղաչեմ, մի՛ դարձներ քու երեսդ ինձմէ, եւ մի՛ հաներ զիս քու ծառայիցդ կարգէն, հապա արժանի ըրէ զիս՝ որ ինծի պէս մեղապարտ ու անարժան ծառայդ մատուցանէ քեզի այս ընծան: Վասն զի դու ես թէ՛ մատուցողը, թէ՛ մատուցողը, թէ՛ ընդունողը եւ թէ՛ մեզի շնորհք եւ ողորմութիւն տուողը, Քրիստոս Աստուած մեր: Եւ մենք քեզի փառք կը մատուցանենք, նոյնպէս եւ քու անսկիզբն Հօրդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգւոյդ, այժմ եւ:

Հարց. Քահանային սկիզով օրհնութիւն տալը արդեօք կասկած չտա՞ր ժողովրդեան որ իբր թէ արդէն սրբագործեալ համարուին հացն ու գինին:

Պատ. Ոչ, այդ կասկածին պատճառ չկայ. վասն զի եթէ խաչով, մասունքով, եւս եւ պարզ ձեռքով օրհնութիւն կը տրուի ժողովրդեան, տարակոյս չկայ որ կարելի է օրհնել եւ խաչակնքել ժողովրդեան վրայ նաեւ օձեալ սկիզով եւ օրհնեալ սուրբ սպասովը, թէպէտ եւ դեռ սրբագործութիւնը կատարուած չէ:

Հարց. Ժողովուրդը ի՞նչպէս եւ ի՞նչ մտքով կ'ընդունի այն օրհնութիւնը:

Պատ. Ջերմեռանդ երկրպագութեամբ՝ իբրեւ օրհնութիւն՝ սուրբ սպասովը տրուած եւ այն սկիզով՝ յորում միշտ կը սրբագործուի մարմին եւ արիւն Որդւոյն Աստուծոյ:

Հարց. Վերաբերութենէն ետքը քահանան ինչո՞ւ ձեռքը կը կը լուանայ:

Պատ. Անոր համար որ այնուհետեւ սրբագործութիւնը պիտի սկսի եւ ինքը ուրիշ գործողութիւն մը պիտի չընէ, եւ ոչ իսկ խնկարկութիւն մինչեւ ճաշակումէն ետքը:

ՈՂՋՈՅՆ

Հարց. Վերաբերութենէն ետքը ի՞նչ արարողութիւն կայ:

Պատ. Ողջունի արարողութիւնը:

Հարց. Ի՞նչ է ողջունին խորհուրդը, եւ ի՞նչպէս կը տրուի:

Պատ. Եկեղեցին չմոռնար Քրիստոսի Տեառն մերոյ այն պատուէրը որ կ'ըսէ. «Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյն, եւ անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ գլխին, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. եթէ նախ հաշտեաց ընդ եղբոր քում, եւ ապա եկեալ մատուցիր զպատարագն քո, - այսինքն՝ թէ որ քու ընծադ սեղանին վրայ մատուցանիցես, եւ այն տեղը միտքդ գայ որ եղբայրդ սրտին մէջ քեզի դէմ բան մը ունի, թող քու ընծադ սեղանին առջեւը, զնա առաջ հաշտուէ եղբորդ հետ, ու յետոյ եկուր՝ ընծայէ քու պատարագդ»: Ուստի կ'ուզէ որ սուրբ պատարագը մատուցանողներն ալ հաշտ ըլլան իրարու հետ, որ չունենան մէկգմէկու դէմ. եւ անոր նշան՝ սուրբ սիրով ողջոյն տան իրարու:

Հարց. Ողջունին հանդէսը ինչո՞վ կ'սկսի:

Պատ. Սարկաւագին այս քարոզովը.

«Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի՛ խղճիւ եւ գայթակղութեամբ. մի՛ նենգութեամբ, խորամանկութեամբ. մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ: Մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւատով, լցեալ սիրով լի՛ եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ եւ գտցուք զողորմութեան զչնորհս յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալստեան՝ տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի կեցուցէ եւ ողորմեսցի»:

Դարձեալ, հաւատով ու սուրբ սրտով աղօթքի կենանք առ Աստուած սուրբ սեղանոյս առջեւը, երկիւղած մտքով, ոչ ծանր խղճմտանքով եւ չար օրինակ տալով կամ առնելով. ոչ կեղծաւորութեամբ եւ խորամանկութեամբ, ոչ ստութեամբ եւ ոչ մարդ խաբելու ջանքով. ոչ երկբայութեամբ եւ ոչ թերահաւատութեամբ. Հապա արդար վարքով, շիտակ մտքով, ուղիղ սրտով, կատարեալ հաւատով, եղբայրսիրութեամբ լցուած, եւ ամէն տեսակ բարի գործերով եւ առաքինութեամբ զարդարուած աղօթքի կենանք Աստուծոյ սուրբ սեղանոյս առջեւը, որպէս զի ողորմութեան եւ շնորհաց արժանի ըլլանք Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի յայտնութեան եւ միւսանգամ գալստեան օրը, նա փրկէ զմեզ եւ ողորմի մեզի:

Հարց. Քահանան այն միջոցին ի՞նչ աղօթք կ'ընէ:

Պատ. Սարկաւագին ձեռքէն ընդունած ընծայիցը վրայ այս աղօթքը կ'ընէ ի ծածուկ.

«Տէր Աստուած զօրութեանց եւ արարիչ ամենայն լինելութեանց, որ յանէութենէ զբնակս ի ցուցակութիւն անկալ գոյացուցեր. որ եւ զմեր զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս՝ այսպիսի անհաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս. դու Տէր՝ որում պատարագեմք զպատարագիսս, ընկալ առ ի մէջ զառաջադրութիւնս զայս, եւ աւարտեա զսա ի խորհրդականութիւն մարմնոյ եւ արեան միածնի քո. դեղ թողութեան մեղաց պարգեւեա ճաշակողացս զհացս զայս եւ զբաժակս»:

Տէր Աստուած զօրութեանց եւ ստեղծող ամենայն արարածոց, դուն որ ամէն բան ոչինչէն դուրս բերելով ստեղծեցիր, եւ մեր հողեղէն բնութեանը քու մարդասիրութեամբդ պատիւ ընելով՝ սպասաւոր եւ պաշտօնեայ դրիր այսպիսի անհաւոր եւ անպատմելի խորհուրդներուն. քեզի կը մատուցանենք մենք այս պատարագը եւ այս ընծաները. ուստի դու ընդունէ մեր ձեռքէն այս առաջադրութիւնը. քու միածին Որդւոյդ մարմնոյն եւ արեանը խորհուրդը ասոր վրայ կատարէ, եւ այս հացն ու բաժակը ճաշակողացս մեղքերուն թողութեան դեղ պարգեւէ:

Յետոյ խաղաղութիւն, կամ որ նոյն է, ողջոյն կուտայ ժողովուրդին:

Հարց. Սարկաւազը ի՞նչ կերպով կը հրամայէ որ հաւատացեալք ողջոյն տան իրարու.

Պատ. . Այս խօսքով.

«Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. եւ որք ոչ էք կարողք հաղորդիլ աստուածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք»:

Ողջոյն տուէք իրարու սուրբ համբոյրով. եւ ձեզմէ ով որ արժանի չէ մասնակից լինելոյ աստուածային խորհրդոյս թող դուրս ելնէ ու հոն կենայ աղօթքի:

Յետոյ նախ ինքը կը համբուրէ սեղանը եւ քահանային ձեռքը, եւ կ'երթայ դպրապետին, կամ թէ որ Վարդապետ կամ Եպիսկոպոս կայ՝ անոր կուտայ ողջոյնը, եւ նոքա ժողովրդեան եւ իրարու կը հաղորդեն զայն, համբուրի ձեռով ծռելով իրարու ուսերուն եւ ըսելով. «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ». եւ ողջոյնն ընդունողները պատասխան կուտան թէ «Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»:

Հարց. Դպիրները այն միջոցին ի՞նչ կ'երգեն.

Պատ. Այս ոտանաւոր երգը.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.

Թշնամութիւնն հեռացաւ.

Որ էնն Աստուած աստ բազմեցաւ.

Սէրն յընդհանուրըս սիւսեցաւ:

Խաղաղութեան ձայն հնչեցաւ.

Արդ պաշտօնեայք բարձեալ զձայն,

Սուրբ ողջունի հրաման տուաւ:

Տուք զօրհնութիւն ի մի բերան.

Եկեղեցիս մի անձն եղեւ.

Միասնական Աստուածութեանն,

Համբոյրս յօդ լրման տուաւ.

Որում սրովբէքն են սրբաբան:

Քրիստոս մեր մէջը յայտնուեցաւ,

Աստուած որ էն հոս բազմեցաւ:

Խաղաղութեան աւետիս մը լսուեցաւ,

այս սուրբ ողջունիս հրաման տրուեցաւ.
եկեղեցիս մէկ հոգի եղաւ,
այս համբոյրը հասարակաց կապ մը
տրուեցաւ. թշնամութիւնը հեռացաւ,

սէրն ամէն տեղ տարածուեցաւ: Արդ ո՛վ
պաշտօնեայք, ձայներդ բարձրացուցէք,
ամէնքդ մէկ բերան օրհնութիւն տուէք
միասնական Աստուածութեան գոր
սերովբէք սուրբ սուրբ սուրբ երգով կը
փառաբանեն:

ՍՐԲԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հարց. Ողջունէն ետքը ի՞նչ արարողութիւն կ'սկսի.

Պատ. Սրբագործութեան արարողութիւնը:

Հարց. Ի՞նչ կերպով կ'սկսի սրբագործութեան արարողութիւնը.

Պատ. Առաջ սարկալազը կը քարոզէ ժողովուրդին որ ահիւ եւ դողութեամբ կենան, ուշադրութեամբ նային սուրբ պատարագին կատարմանը վրայ.

«Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարևք կացցուք, եւ նայեցարուք զգուշու-
թեամբ»:

Ահով կենանք, վախով կենանք, աղէկ կենանք, եւ զգուշութեամբ նայինք:

Ժողովուրդը կը պատասխանէ թէ «Մեր ուշադրութիւնը առ քեզ է, Տէր Աստուած.
- Առ քեզ Աստուած»:

Սարկալազը նորէն կ'ըսէ. «Պատարագ Քրիստոս մատչի անարատ գառն
Աստուծոյ». այսինքն գիտցէք որ Քրիստոս գառն Աստուծոյ կը պատարագուի
այժմ սեղանին վրայ: Ժողովուրդն ալ ցնծութեամբ կը յայտնէ իր հաւատքը եւ
յոյսը՝ ըսելով. «Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան».
այսինքն կը հաւատանք որ այս օրհնեալ պատարագին զօրութեամբը կ'ընդունինք
Աստուծոյ ողորմութիւն եւ խաղաղութիւն:

Հարց. Քահանան ի՞նչ օրհնութեամբ կը պատասխանէ ժողովրդեան խօսքերուն.

Պատ. «Շնորհք, սէր, եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր Որդւոյ եւ
Հոգւոյն սրբոյ, եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ». Հայր եւ Որդի եւ
Հոգին սուրբ զարդարեն զձեզ ամէնքդ ամենայն շնորհօք եւ սիրով, եւ քաւելով ձեր
մեղքերը՝ սուրբ ընեն ձեզ:

Հարց. Ի՞նչ կը նշանակէ սարկալազին քարոզելը թէ «Զդրունս, զդրունս ամենայն
իմաստութեամբ եւ զգուշութեամբ»:

Պատ. Որովհետեւ պատարագին այս մասը բուն խորհրդոյն կատարման մասն է, եւ
միայն հաւատացեալներ ներկայ պիտի գտնուին, սարկալազը կը պատուիրէ որ
եկեղեցւոյն դռները փակ պահուին զգուշութեամբ, որպէս զի անարժանները եւ
արդէն դուրս ելնողները ներս չմտնեն:

Ներսը կեցողներուն ալ կը քարոզէ որ իրենց խելքը միտքը սուրբ երկիւղիւ առ
Աստուած բարձրացնեն. «Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր՝ աստուածային
երկիւղիւ»:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ պատասխան կուտայ.

Պատ. «Ունիմք առ քեզ, Տէր ամենակալ» այսինքն մեր խելքն ու միտքը արդէն
առ քեզ բարձրացած է, Տէր ամենակալ:

Հարց. Սարկալազը ի՞նչպէս կը վերջացնէ իր քարոզը.

Պատ. Այս խօսքով. «Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ:» այսինքն բոլոր սրտով փառք տուէք Աստուծոյ: - Ժողովուրդն ալ կ'ըսէ. «Արժան եւ իրաւ» այսինքն յիրաւի արժան է որ բոլոր սրտով փառք եւ գոհութիւն տանք Աստուծոյ մեզի ըրած այսքան եւ այսպիսի ողորմութեանը համար:

Հարց. Քահանան այն միջոցին ի՞նչ աղօթք կ'ընէ ծածուկ:

Պատ. Այս աղօթքը. «Արժան է ստուգապէս եւ իրաւ՝ ամենայորդոր փութով միշտ երկրպագանելով փառաւորել զքեզ, Հայր ամենակալ, որ քոյին անգննելի եւ արարչակից Բանիւղ գանիծիցն բարձեր զկրճիմն: Որ ժողովուրդը ինքեան առեալ գեկեղեցի սեպհականեաց զհաւատացեալս ի քեզ, եւ գննելի բնութեամբ ըստ ի Կուսէն տնտեսութեան՝ հաճեցաւ բնակիլ ի մեզ: Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ գերկիրս երկին արար: Վասն զի որում ոչն հանդուժէին առաջի կալ գուարթնոցն ջոկք՝ զարհուրեալք ի փայլակնացայտ եւ յանմատոյց լուսոյ աստուածութեանդ, եղեալ այդպիսի մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան, շնորհեաց մեզ ընդ երկնայինսն պարել զհոգեղէն պարս - Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձապէս գոչելով ընդ նոսին աղաղակել եւ ասել»:

Ստոյգ եւ յիրաւի արժան է ամենայորդոր ջանքով ու ջերմեւաղութեամբ միշտ երկրպագանելով փառք տալ քեզի, ո՛վ Հայր ամենակալ, որ քու անտեսանելի եւ արարչակից Բանիւղ անիծից արգելքը մեր վրայէն վերցուցիր: Իսկ նա սուրբ եկեղեցին իրեն սեպհական ժողովուրդ առնելով քու հաւատացեալներդ որոշեց, եւ աչքի տակ ընկնող (մարդկային) բնութեամբ, զոր տնօրինաբար առաւ ի սրբոյ Կուսէն հաճեցաւ մեր մէջը բնակիլ, եւ աստուածային ճարտարապետութեամբ ու հրաշագործ գորութեամբ երկիրս երկինք ըրաւ: Վասն զի նա որոյ առջեւը չէին կրնար դիմանալ հրեշտակաց գունդերը, զարհուրելով աստուածութեանդ փայլակնացայտ եւ անմատչելի լոյսէն, մարդ եղաւ՝ զմեզ փրկելու համար, եւ այս շնորհը ըրաւ մեզի որ երկնային գուարթնոց հետ մէկտեղ հոգեւորական պար բռնենք - Եւ սերովբէից ու քերովբէից հետ միաբան ու մէկ ձայնով սուրբ սուրբ սուրբ երգելով եղանակել, եւ անոնց հետ ի միասին համարձակ ըսել:

Հարց. Դպիրները ի՞նչ կ'երգեն այն միջոցին:

Պատ. Քահանային յիշած հրեշտակային երգը՝ ըստ տեսլեան Եսայեայ մարգարէին

«Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք քորհնութիւն ի բարձունս. օրհնեալ որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն. ովսաննա ի բարձունս»:

Այս սքանչելի երգին երկրորդ մասը եկեղեցին աւելցուցած է Եբրայեցւոց ծերոց եւ տղայոց փառաբանութենէն առնելով:

Հարց. Ովսաննա ի՞նչ ըսել է:

Պատ. Եբրայական բառ է, եւ կը նշանակէ՝ փրկեա՛ զմեզ, կամ կեցո զմեզ, եւ մեր մէջ շատ տեղ թարգմանուած է կեցո՛ Տէր խօսքով. բայց Հրէից սովորութիւն էր որ այդ խօսքը փառատրութեան տեղ ալ կը բանեցնէին, ինչպէս որ կ'ըսենք, փառք Աստուծոյ, կամ փառք ի բարձունս:

ԿԱՆՈՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Հարց. «Սուրբ սուրբ» էն ետք քահանային ըսած աղօթքը ինչո՞ւ համար սովորաբար կանոն կ'ըսուի:

Պատ. Վասն զի պատարագին գլխաւոր մասը այն աղօթքը կը համարուի, եւ անոր մէջն են սրբագործութեան առաջին եւ գլխաւոր խօսքերը:

Հարց. Ի՞նչպէս կ'ըսէ քահանան այն աղօթքը:

Պատ. Բազկատարած եւ ծածուկ:

Հարց. Ո՞րն է այն աղօթքը:

Պատ. «Սուրբ սուրբ սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ. եւ ո՞վ ոք պանծասցի բովանդակել բանիւ զքո ի մեզ զանբաւ բարեգործութեանդ զեղմունս: Որ եւ անդէն իսկ ի նախնումն զանկեայն ընդ մեղօք՝ զանազան եղանակօք խնամեալ սփոփեցեր, մարգարէիւք, օրինացն տըւչութեամբ, քահանայութեամբ, եւ ստուերակերպ երնջոցն մատուցմամբ:

«Իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զՈրդիդ քո միածին պարտապան եւ պարտս, զենումն եւ օծեալ, գառն եւ երկնաւոր հաց, քահանայապետ եւ պատարագ: Վասն զի ինքդ է բաշխող, եւ նոյն ինքդ բաշխի ի միջի մերում միշտ անծախապէս:

«Վասն զի եղեալ հաւաստեալ եւ առանց ցնորից մարդ, եւ անշփոթ միութեամբ մարմնացեալ յԱստուածածին եւ ի սուրբ կուսէն Մարիամայ՝ ճանապարհորդեաց ընդ ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց. եւ յաշխարհակեցոյց եւ յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն,

«Առեալ զհացն ի սուրբ յաստուածային՝ յանմահ՝ յանարատ եւ յարարչագործ՝ ի ձեռս իւր, օրհնեաց, գոհացաւ, երեկ, ետ իւրոց ընտրեալ սուրբ եւ բազմեալ աշակերտացն ասելով:

Սուրբ սուրբ սուրբ ես ճշմարտապէս եւ ամենասուրբ, եւ ո՞վ կը համարձակի խօսքով պատմելու քու մեր վրայ ունեցած անհուն բարեգործութեանդ բոլոր զեղմունքը: Վասն զի դուն ի սկզբան եւս մեղքի տակ ինկած մարդը զանազան կերպերով հոգացիր ու մխիթարեցիր, մարգարէներով, օրհնքներ տալով, քահանայութեամբ, եւ արջառոց գոհերով, որ ճշմարիտ գոհին շուք ու օրինակ էին:

Իսկ այս ետքի ժամանակներս բոլոր մեր պարտքերուն դատապարտութեան վճիռը պատուեցիր, ու տուիր մեզի քու միածին Որդիդ թէ՛ իբրեւ պարտապան եւ թէ՛ իբրեւ պարտք, թէ՛ իբրեւ գոհ եւ թէ՛ իբրեւ օծեալ գոհագործ, գառն եւ հաց երկնաւոր, քահանայապետ եւ պատարագ: Վասն զի դա ինքն է բաշխողը, եւ նոյն ինքը կը բաշխուի միշտ մեր մէջը առանց սպառելու:

Վասն զի դա ստուգապէս մարդ ըլլալով եւ ոչ թէ աչքի միայն երեւնալով, եւ անշփոթ միաւորութեամբ աստուածսիրութեան եւ մարդկութեան մարմին առնելով Աստուածածին սուրբ Կուսէն Մարիամայ, այս մարդկային կեանքի ամէն չարչարանքներէն անցաւ առանց մեղքի եւ յետոյ երբ իրեն կամքովը եկաւ ի սուրբ խաչն որ աշխարհիս կեանք տուողն ու մեր փրկութեանը գործիքն է,

Առաւ հացը իր սուրբ, աստուածային, անմահ, անարատ եւ արարչագործ ձեռքը, օրհնեց, գոհացաւ, մանրեց ու տուաւ իր ընտրած սուրբ աշակերտներուն՝ որ բազմեր էին այս խօսքերը ըսելով:

Յետոյ կ'ըսէ սրբագործութեան խորհրդաւոր խօսքերը:

Հարց. Պատարագի կանոնին ո՞ր խօսքովը կը կատարուի կամ կ'սկսի կատարուիլ սրբագործութեան խորհուրդը:

Պատ. Քրիստոսի Տեառն մերոյ ըսած խօսքերով, - նշխարին վրայ. «Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի քառութիւն եւ ի

թողութիւն մեղաց»: Եւ գինւոյն վրայ. «Արբէք ի սմանէ ամենեքեան. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Հարց. Այն խօսքերը ի՞նչ կերպով կը յիշէ քահանան.

Պատ. Պատմական ոճով. վասն զի աղօթքին հետ հիւսուած են, եւ առ Հայր ուղղեալ է բոլոր աղօթքը. միայն թէ Առէք կերէք ու Արբէք ի սմանէն ձայնիւ կ'ըսէ որ ժողովուրդն ալ կարենայ լսել, եւ երկրպագութիւն ընել սուրբ խորհուրդին:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ պատասխան կուտայ սրբագործութեան խօսքերուն.

Պատ. Իւրաքանչիւրէն ետքը կ'ըսէ երկիւղածութեամբ «Ամէն» որ ըսել է եղիցի, այսինքն խոստովանիմ եւ հաւատամ:

Հարց. Քահանան ի՞նչ արարողութեամբ կը կատարէ սրբագործութեան խորհուրդը.

Պատ. Երբ որ կանոնին այն խօսքերուն կը հասնի թէ «Առեալ զհացն», եւ սուրբ նշխարը ձեռքը կ'առնէ, օրհնեաց ըսած ատենը խաչակնքելով կ'օրհնէ, գոհացաւ ըսելով՝ վեր կը նայի, եբեկ ըսելով՝ նշխարին չորս ծայրերէն մէկ մէկ քիչ կը բեկանէ, եւ ապա երկու ձեռքը բարձրացուցած՝ Առէք կերէքը կ'ըսէ:

Նոյնպէս կ'օրհնէ նաեւ բաժակը, եւ յետոյ վեր բարձրացնելով կ'ըսէ Արբէք ի սմանէն:

Հարց. Դպրաց Հայր Երկնաւոր երգը երգուած ժամանակը, քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ.

Պատ. Կանոնին շարունակութիւնը առաջ կը տանի ծածուկ, նոյնպէս պատմական ձեւով եւ այս խօսքերով.

«Եւ զսոյն միշտ իւր յիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո միածին. եւ իջեալ ի ստորին վայրս մահու մարմնովն՝ զոր ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ, եւ զնիգս դժոխոցն աղարտեալ հօրեղապէս, զքեզ միայն ծանոյց ճշմարիտ Աստուած՝ Աստուածդ կենդանեաց եւ մեռելոց»:

Եւ այս բանս իբրեւ իրեն յիշատակ ընելու պատուէր տուաւ մեզի քու բարերար միածին Որդիդ, եւ մեր մարդկային բնութենէս առած մարմնովը մահուան ստորին կողմերը իջնալով, եւ դժոխոց նիզերը հօր զօրութեամբ խորտակելով, միայն քեզ ճանչցուց ճշմարիտ Աստուած, քեզ որ Աստուած եւ արարիչ ես կենդանեաց եւ մեռելոց:

Այս միջոցիս սուրբ ընծաները ձեռքն առած՝ կ'ըսէ ծածուկ.

«Եւ արդ մեք Տէր ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ եւ արեան միածնի քոյ, յիշեմք զդորա վասն մեր զփրկագործ չարչարանսն, զկենսատու խաչելութիւնն, զերեքօրեայ զթաղումն, զերանելի յարութիւնն, զաստուածապէս համբարձումն, զնստիլն ընդ աջմէ քո, Հայր. զահաւոր եւ զփառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք եւ օրհնեմք»:

Եւ արդ մենք Տէր, այս մեզի տրուած հրամանին համեմատ՝ յառաջ բերելով այս քու միածնիդ փրկական մարմնոյն եւ արեան խորհուրդը, կը յիշենք անոր մեզի համար կրած փրկագործ չարչարանքը, կենսատու խաչելութիւնը, երեքօրեայ թաղումը, երանական յարութիւնը, աստուածապէս համբառնալը, քու աջ կողմդ նստիլը՝ Հայր Աստուած, ահաւոր եւ փառաւոր միւսանգամ գալուստը կը դաւանինք ու կ'օրհնենք:

Եւ ընծաները փոքր ինչ բարձրացնելով եւ առ Հայր մատուցանելով՝ կ'ըսէ ձայնով. «Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք՝ ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն».

այսինքն քո մեզի ըրած պարգեւդ քեզ կ'ընծայեմք, ամէն բանի եւ ամենուն համար:

Հարց. Ժողովուրդը այս տեսնելով ի՞նչ կ'ըստ:

Պատ. Յնժուլթեամբ կ'երգէ միաբան:

«Յամենայնի օրհնեալ ես Տէր. օրհնեմք զքեզ, գովեմք զքեզ. գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր»:

Քահանան եւս նոյն իմաստով կը շարունակէ ծածուկ իր աղօթքը:

«Զքեզ արդարեւ, Տէր Աստուած մեր, գովեմք, եւ զքէն գոհանամք հանապազ: Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս այսպիսի ահաւոր եւ անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւորս: Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք եւ միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ ի քո բազմագեղ ներողութիւնդ ցանգ ապաւինեալ համարձակիմք մերձենալ ի սպասաւորութիւն մարմնոյ եւ արեան միածնի քոյ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Եւ յետոյ խաղաղութիւն կուտայ:

Հարց. Երբ որ սարկաւազը այն միջոցին, Աստուծոյ երկրպագեսցուք կ'ըստ, քահանան ու ժողովուրդը ի՞նչ կ'ընեն:

Պատ. Քահանան երկրպագութիւն կ'ընէ սեղանը համբուրելով, եւ կը խնդրէ որ Հոգին սուրբ իջնայ սուրբ ընծայից եւ ժողովրդեան վրայ, «Երկրպագանեմք եւ աղաչեմք եւ խնդրեմք ի քէն, բարերար Աստուած, առաքեա ի մեզ եւ յառաջի եղեալ ընծայս այս զմշտնջենաւորակից քո եւ զէակից սուրբ Հոգիդ»: Եւ մինչդեռ դպիրները ժողովրդեան հետ կ'երգեն «Որդի Աստուծոյ»: Երգը, քահանան զատ զատ երեք երեք անգամ խաչակնքելով սուրբ ընծայից վրայ կ'ըստ:

«Որով զհացս օրհնեալ մարմին ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի»:

Անով՝ այսինքն Հոգևով սրբով օրհնելով այս հացը ճշմարտապէս մարմին ըրէ Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Եւ զբաժակս օրհնեալ արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի»:

«Որով զհացս եւ զգինիս օրհնեալ մարմին եւ արիւն ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով Հոգևովդ քով սրբով»:

Անով այս հացս ու գինին օրհնելով ճշմարտապէս մարմին եւ արիւն ըրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ փոխարկելով ասոնք (ի մարմին եւ յարիւն Քրիստոսի) քու սուրբ Հոգևովդ:

Այս ամէն մէկ խօսքերուն եւ օրհնութեան ժամանակը սարկաւազը քահանային քովը կեցած կ'ըստ ցած ձայնով ահիւ եւ դողութեամբ՝ «Ամէն. Օրհնեա Տէր»:

Իսկ քահանան ձայնով կը վերջացնէ աղօթքը ու կ'ըստ:

«Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս՝ յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Հարց. Թէ որ սրբագործութեան խորհուրդը Առէք կերէք եւ Արբէք ի սմանէ ըսած ժամանակը կը կատարուի, եւ հացն ու գինին կը փոխարկուին ի մարմին եւ յարիւն Քրիստոսի, ինչո՞ւ համար Հոգևոյն սրբոյ կոչման աղօթքին մէջ արարեր չըսուիր, իբրեւ յիշատակութիւն անցելոյն, հապա արասցես՝ իբրեւ ապառնի:

Պատ. Հոգևոյն սրբոյ կոչումը ոչ թէ նոր աղօթք կամ գործողութիւն պէտք է համարել այս տեղ, այլ իբրեւ ամբողջացուցիչ մասն սրբագործութեան աղօթքին,

ինչպէս որ գրեթէ ամենայն խորհուրդք եկեղեցւոյ եւս Հոգւոյն սրբոյ կոչմամբը կը կատարուին:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ Ք

Հարց. Սրբագործութեան մասն աւարտելէն ետքը քահանան եւ դպիրները ի՞նչ աղօթքներ կ'ընեն.

Պատ. Թէ՛ քահանան եւ թէ՛ ժողովուրդը կ'սկսին սուրբ պատարագին միջնորդութեամբը իրենց հայցուածները խնդրել յԱստուծոյ, յիշատակելով ընդհանրապէս մի առ մի գամենայն հաւատացեալս, զկենդանիս եւ զհանգուցեալս: Քահանան ծածուկ կ'ըսէ այս աղօթքը.

«Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղծալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի. սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդաց, նաւելոց, կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ որք ի պատերազմունս բարբարոսաց:

«Սովաւ եւ օդոց շնորհեա զբարեխառնութիւն, եւ անդոց զպտղաբերութիւն, եւ ախտացելոց ի պէս պէս ցաւս փութապէս առողջութիւն:

Սովաւ հանգո գամենեսեան յառաջագոյն ի Քրիստոս ննջեցեալսն. զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս, զերիցունս, զսարկաւագունս, եւ զքնաւ ուխտ եկեղեցւոյ քում սրբոյ. եւ գամենեսեան որք յաշխարհական կարգէ՝ զարս եւ զկանայս հաւատով վախճանեալս»:

Եւ կը վերջացնէ ձայնիւ ըսելով.

«Ընդ որս եւ մեզ այց արասցես բարերար Աստուած աղաչեմք»:

Անոնց հետ մեր վրայ եւս ողորմութեան աչքերով նայելը կը խնդրենք, բարերար Աստուած:

Ժողովուրդն ալ կը պատասխանէ, «Յիշեա Տէր, եւ ողորմեա». այսինքն՝ յիշէ Տէր քահանային յիշատակած հաւատացեալները, եւ ողորմէ անոնց եւ մեզ առհասարակ:

Հարց. Յանուանէ ո՞ր սուրբերը կը յիշէ քահանան.

Պատ. Ամենէն գլխաւորները, այսինքն զԱստուածածին սուրբ Կոյսն Մարիամ, զՅովհաննէս Մկրտիչ, եւ զսուրբն Ստեփանոս Նախավկայ: - Եւ այն միջոցին սարկաւագը սեղանին աջակողմը կեցած՝ կը յիշատակէ տուն առ տուն ուրիշ գրեթէ ամենայն սուրբերը՝ թէ խումբ խումբ եւ զատ զատ, մանաւանդ ազգային սուրբերն ու Հայաստանեայցս եկեղեցւոյ առաքեալներն ու վարդապետները, եւ առաջին ու գլխաւոր նահատակները:

Հարց. Սրբոց յիշատակութիւնը պատարագին մէջ ի՞նչ խորհուրդ ունի.

Պատ. ա) Եկեղեցին երկրիս վրայ Քրիստոսի սուրբ պատարագը մատուցած ժամանակը, երկնաւոր եկեղեցւոյ՝ այսինքն սրբոց եւ հրեշտակաց հետ եւս կը միանայ, եւ Քրիստոսի Տեառն մերոյ ձեռքովը զինուորեալ եւ յաղթական եկեղեցիները միաբան կը մատուցանեն սուրբ պատարագը:

բ) Թէպէտ եւ գիտենք թէ սուրբերը արդէն երանական կեանքի արժանի եղած են հոգւով, եւ արքայութեան փառքը կը վայելեն, սակայն սուրբ պատարագին անհուն արդիւնքովը թէ նոցա փառքին պատահական յաւելումը կը խնդրենք, եւ թէ նոցա

մեզ համար ըրած բարեխօսութեան ընդունելի լինելը: - Հին ատենի եկեղեցեաց մէջ, մանաւանդ առ Յոյնս՝ սովորութիւն կար որ սեղանին վրայ երկու գրուածք կը պահուէր՝ ղիփտիկոն անունով: մէկուն վրայ սրբոց եւ հանգուցեալ երեւելի անձանց անունները կը գտնուէին գրուած, եւ միւսին վրայ եկեղեցական եւ քաղաքական իշխանաւորք, այսինքն ժամանակին հայրապետները, թագաւորները, իշխանները, եւս եւ մասնաւոր կերպով խնդրողները որ իրենց համար յիշատակութիւն ըլլայ սուրբ պատարագին մէջ: Այս սովորութիւնը տեղ տեղ մինչեւ այժմ մնացած է առ Յոյնս եւ առ Ռուսս:

Հարց. Սարկաւագին յիշած գլխաւոր սուրբերը որո՞նք են.

Պատ. Հայաստանեայց եկեղեցւոյ առաջին Լուսաւորիչ Թադէոս եւ Բարթողիմէոս առաքեալները. սուրբ Հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ, նորա որդիքն ու թոռունքը, Արիստակէս, Վրթանէս, Յուսիկ, Գրիգորիս, Մեծն Ներսէս, Սահակ Պարթեւ, Դանիէլ, Խաղ եպիսկոպոս, Մեսրոպ վարդապետ, Գրիգոր Նարեկացի, Ներսէս Կլայեցի, որ է Շնորհալին, Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթեւացի եւ Մովսէս Տաթեւացի վարդապետները եւ Գրիգորիսեանք եւ Ներսիսեանք (որ են գլխաւորապէս Գրիգոր Վկայասէր եւ Գրիգոր Տղայ, Ներսէս Լամբրոնացին) եւ ուրիշ հովիւք եւ հովուապետք Հայաստանեայց:

Յետոյ կը յիշէ սարկաւագը Միանձնացեալ կրօնաւորները կամ ճգնաւորները, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, եւ ամէն հասակէ անձինք որք հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս ննջեցին:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կը պատասխանէ այս յիշատակութեանց.

Պատ. Առաջիններուն պատասխան կուտայ՝ «Յիշեա Տէր եւ ողորմեա» ըսելով. իսկ վերջին տունին կը պատասխանէ թէ «Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն». այսինքն՝ ամենայն խնդրուածոց համար եւ ամենուն համար. գոր փոքր ինչ առաջ քահանան եւս ըսած էր:

Հարց. Սրբոց յիշատակութեանց ատենը քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ.

Պատ. Եկեղեցւոյ եւ եկեղեցւոյ առաջնորդաց համար կ'աղօթէ, եւ յետոյ ձայնիւ կ'ըսէ սրբազան կաթողիկոսին համար.

«Եւս առաւել զեպիսկոսապետն մեր, եւ զպատուական հայրապետն ամենայն Հայոց գտէր (այս անուն) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ»:

Օսմանեան կայսրութեան մէջ սովորութիւն է յիշատակել այս միջոցին նաեւ Կոստանդնուպոլսոյ եւ Երուսաղէմի Սրբազան Պատրիարքները, եւ Ռուսաստանի մէջ Ռուսաց Կայսրը եւ նորա օգոստափայլ ազգատոհմը: - Նոյն յիշատակութիւնները կը կրկնէ նաեւ սարկաւագը «Գոհութիւն»-ին մէջ:

Հարց. Սարկաւագը այն միջոցին ի՞նչ կը քարոզէ.

Պատ. Աղօթական ձեւով փառք կուտայ Աստուծոյ ժողովուրդին կողմէ ու կ'ըսէ.

«Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ տէր Աստուած մեր. վասն սուրբ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս. զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն եւ զըղծալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց, եւ եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն հայոց տեառն տեառն (այս անուն) Սրբազնագոյն Կաթողիկոսին, եւ Առաջնորդին մերում (այս անուն) Արհի եպիսկոպոսին. եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ:

Եւ վասն զօրութեանց եւ յաղթութեանց թագաւորաց քրիստոնէից եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ ըրաբունապետացն մերոց եւ շինողաց սուրբ Եկեղեցւոյս եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ:

Ազատութիւն եղբարց մերոց գերելոց եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս: Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն, եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Քեզի գոհութիւն եւ փառք կը մատուցանենք Տէր Աստուած մեր այս սուրբ եւ անմահ պատարագիս համար որ սուրբ սեղանիս վրայ է, որպէս զի պարգեւես սա մեր կեանքի եւ վարքի սուրբ ըլլալուն միջնորդ եւ աւելի: Ասով պարգեւէ մեզի սէր հաստատութիւն հաւատոյ եւ բոլոր աշխարհիս ցանկալի խաղաղութիւն: (Ասով ողորմէ) սուրբ եկեղեցւոյ եւ բոլոր ուղղափառ Եպիսկոպոսներուն, մեր Եպիսկոպոսապետին եւ պատուական հայրապետին ամենայն Հայոց Տէր (այս անուն) Կաթողիկոսին, եւ մեր Առաջնորդ (այս անուն) Արքեպիսկոպոսին, եւ այս քահանայիս որ այս սուրբ պատարագը կը մատուցանէ: (Կաղաչենք) նաեւ քրիստոնեայ թագաւորներուն զօրանալուն եւ յաղթող ըլլալուն, եւ բարեպաշտ իշխաններուն համար: Կաղաչենք եւ կը խնդրենք նաեւ հանգուցեալ հոգիներուն համար. եւ մանաւանդ մեր հանգուցեալ վարդապետներուն եւ առաջնորդներուն, եւ այս սուրբ եկեղեցիս շինողներուն, եւ ասոր հովանիին տակ հանգչողներուն համար: Ազատութիւն (խնդրենք) մեր գերի ինկած եղբայրներուն, եւ առաջիկայ ժողովրդեանս շնորհք եւ ողորմութիւն, եւ անոնց որ հաւատով ի Քրիստոս ննջեցին յաւիտեանական հանգիստ: Բոլորին ալ յիշատակը ըլլայ սուրբ պատարագիս մէջ, կ'աղաչենք:

Հարց. Քահանան այս միջոցին որո՞ւ համար կ'աղօթէ ծածուկ.

Պատ. Ժողովրդեան համար ընդհանրապէս, եւ որոյ համար որ կ'ուզէ կամ խնդրած են իրմէ մասնաւորապէս.

Հարց. Յիշատակութեանց մասը ի՞նչ կերպով կը վերջացնէ քահանան.

Պատ. Այս խօսքով օրհնելով զժողովուրդը.

«Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեսեան»:

Որուն ժողովուրդն ալ կը պատասխանէ. Ամէն. եւ ընդ հոգւոյդ քում»:

ՃԱՇԱԿՈՒՄՆ

Հարց. Ճաշակման մասը ի՞նչ կերպով կ'սկսի.

Պատ. Սարկաւագին այն քարոզով՝ որով կը յորդորէ ժողովուրդը որ յիշատակեալ սրբոց հետ աղաչանքներ ընեն Աստուծոյ, եւ սուրբ սեղանոյն վրայ մատուցուած պատարագին միջնորդութեամբը Հոգւոյն սրբոյ շնորհքն ու պարգեւները խնդրեն, եւ միանգամայն սուրբ Աստուածածինն եւ բոլոր սուրբերը յիշելով բարեխօս բռնեն:

Հարց. Քահանան այն քարոզին ժամանակ ի՞նչ աղօթք կ'ընէ ծածուկ.

Պատ. Այս աղօթքը՝ որ իբր յառաջաբանութիւն է Հայր մերին.

«Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան՝ գոհանամք զքէն, որ ի վեր քան գերանելի նահապետացն, զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զբնութիւն: Վասն զի նոցա Աստուած կոչեցար, իսկ մեզ Հայր հաճեցար անուանիլ

զ/Թալով: Եւ այժմ Տէր, աղաչեմք զքեզ, զայսպիսի առ ի քէն զնորոգ եւ զպատուական անուանադրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցո ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ»:

Ո՛վ Աստուած ճշմարտութեան եւ Հայր ողորմութեան, փառք եւ գոհութիւն քեզ ի, որ մեր մեղաւորներու բնութիւնը աւելի պատուեցիր քան երանելի նահապետները: Վասն զի դուն անոնց Աստուած կոչուեցար, իսկ մեզ ի Հայր անուանիլ կամեցար զթութեամբ: Այժմ եւս կ'աղաչենք քեզ Տէր, այս քու պարգեւած նոր եւ պատուական անունին շնորհքը օրէ օր պայծառացուր եւ ծաղկեցուր քու սուրբ եկեղեցւոյդ մէջ:

Եւ կը վերջացնէ՝ ըսելով ձայնիւ.

«Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ երկնաւորդ Հայր, երգել եւ ասել»:

Հարց. Հայր մերը ո՞վ կ'ըսէ.

Պատ. Դպիրները կ'երգեն, եւ անոնց հետ ժողովուրդը. իսկ քահանան այն աղօթքը կ'ըսէ որ Հայր մերին վերջի խօսքերուն իմաստովը շարադրուած է. երբ որ դպիրք կը դադրին, ինքը ձայնիւ կ'ըսէ Հայր մերին ետքի կտորը. «Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն, եւ փառք յաւիտեանս. ամէն»:

Հարց. Այս Հայր մերին վերջաւորութեան վրայ ի՞նչ գիտելիք կայ.

Պատ. Այս. «Զի քո է արքայութիւն» թէպէտ աւետարանին յունական օրինակներուն մէջ ալ կայ, բայց լատինացւոց թարգմանութեանը մէջ չգտնուելուն պատճառաւ ոմանք կարծեցին թէ Յունաց աւետարաններուն մէջ պատարագի խորհրդատեսութեան մտեր է՝ Ոսկեբերանի ժամանակէն: Բայց այս կարծիքը անհիմն ըլլալուն մէկ ապացոյցն է միշտ գտնուիլը մեր թարգմանութեան մէջ որ Ոսկեբերանէն եւս առաջ է:

Հարց. Հայր մերէն յետոյ ի՞նչ խնդրանք կ'ընէ քահանան.

Պատ. Խաղաղութիւն տալէն յետոյ կը խոնարհի սեղանին առջեւ, - ինչպէս որ ժողովուրդն ալ այն միջոցին ծունկի կը չոքի, - եւ կ'ըսէ ծածուկ սո Հոգին սուրբ.

«Որ աղբիւրդ ես կենաց եւ բղխումն ողորմութեան Հոգիդ սուրբ, ողորմեա ժողովրդեանս՝ որ խոնարհեալ երկիրպագանեն աստուածու-թեանդ քում: Պահեա գոտսա ամբողջս. տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի, առ ի ժառանգութիւն եւ ի վիճակ հանդերձելոցդ բարեաց:

Հարց. Ի՞նչ ըսել է այս խօսքը. «Տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ ցուցակի».

Պատ. Ըսել է թէ ինչպէս որ այս ժողովուրդը մարմնով խոնարհած՝ երկրպագութիւն կ'ընէ սուրբ խորհրդոյս, տուր որ նոյնպէս խոնարհի քու առջեւդ հոգւով, եւ ընդունի այն շնորհքներն որոնք հարկաւոր են յաւիտենական կեանքի ժառանգ ըլլալու համար»:

Հարց. Ի՞նչ ըսել է, «Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով» եւ այլն.

Պատ. Այս խօսքը նախընթաց խորհրդական աղօթքին շարունակութիւնն ու վերջաւորութիւնն է, եւ կը նշանակէ ի ձեռն Տեառն կամ շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հարց. Սարկաւազը ի՞նչ մտքով կ'ըսէ այս միջոցիս «Պռօսխումէ».

Պատ. Որպէս զի ժողովուրդը ուշադրութեամբ նայի քահանային վեր բարձրացուցած սուրբ հաղորդութեան, եւ երկրպագութիւն ընէ:

Հարց. Քահանան սուրբ խորհուրդը բարձրացուցած ժամանակ ի՞նչ կ'ըսէ:

Պատ. «Ի սրբութիւն սրբոց». կամ որ նոյնն է (ըստ այլ ձեռագրաց) «Սրբութիւն սրբոց». այսինքն այս սուրբ խորհուրդը ամենասուրբ մարմին եւ արիւն է Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կերպով կ'ընէ երկրպագութիւնը:

Պատ. Այս սրտաշարժ խօսքերը ըսելով դպրաց բերնովը. «Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ». այսինքն դու միայն ես Տէր մեր՝ Յիսուս Քրիստոս ի փառս Հօր Աստուծոյ:

Հարց. Քահանան ի՞նչ կերպով կ'ընծայէ սուրբ պատարագը ամենասուրբ Երրորդութեան.

Պատ. Առաջ երից անձանց զատ զատ օրհնութիւն կուտայ՝ ըսելով, «Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ. - Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ. - Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ: Յետոյ առ ամենասուրբ Երրորդութիւնն կ'ըսէ. «Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Դպիրներն ալ կը կրկնեն նոյն փառատրութիւնը երգով:

Հարց. Այն միջոցին քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ ծածուկ.

Պատ. Կը խնդրէ ի Քրիստոսէ շնորհք իրեն եւ բոլոր ժողովուրդին՝ որ արժանապէս հաղորդուին անոր անարատ մարմնոյն եւ պատուական արեանը, ըսելով.

«Նայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ի սրբութենէ քումմէ, եւ յաթոռոյ փառաց թագաւորութեան քոյ: Եկ ի սրբել եւ ի կեցուցանել զմեզ, որ ընդ Հօր նստիս եւ աստ պատարագիս: Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ եւ ի պատուական արենէ, եւ ի ձեռս մեր ամենայն ժողովրդեանս»:

Յետոյ երկրպագութեամբ կը համբուրէ սեղանը, եւ սուրբ մարմինը կ'առնէ ամբողջ կ'ընկղմէ անապական արեան մէջ՝ ի նշան սուրբ մկրտութեան քրիստոնէիցս, եւ կ'ըսէ.

«Տէր Աստուած մեր որ կոչեցեր զմեզ յանուն միածնի Որդւոյ քո քրիստոնեայս, եւ շնորհեցեր մեզ մկրտութիւն հոգեւոր աւազանաւն ի թողութիւն մեղաց, եւ արժանի արարեր զմեզ, հաղորդիլ սուրբ մարմնոյ եւ արեան Միածնի քո: Եւ այժմ, աղաչեմք զքեզ Տէր, արա զմեզ արժանի ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ի մեղաց թողութիւն. եւ գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ»:

Հարց. Ի՞նչ խորհուրդ ունի քահանային դառնալը առ ժողովուրդն՝ սուրբ Խորհուրդը ձեռքը բռնած.

Պատ. Ինչպէս որ այն միջոցին ըսած խօսքերէն եւս կը տեսնուի, այն գեղեցիկ արարողութեան միտքն է՝ շարժել ժողովրդեան ջերմեռանդութիւնը առ սուրբ Խորհուրդն եւ հաղորդուելու փափաքը յորդորել:

Հարց. Ո՞րն են այն խօսքերը.

Պատ. «Ի Սուրբ ի Սուրբ Պատուական Մարմնոյ եւ յԱրենէ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ ճաշակեսցուք Սրբութեամբ. որ իջեալ յերկնից բաշխի ի միջի մերում: Սա՛ է Կեանք, Յոյս, Յարութիւն, Քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէ՛ք Տեառն Աստուծոյ մերում: Սաղմոս ասացէ՛ք երկնաւոր Թագաւորիս մերում անմահի, որ նստի ի կառս քերովբէականս»:

Հին եւ ընտիր գրչագիրներուն մէջ այսպէս կը կարդացուի. «Սա է կեանք, յոյս յարութեան, քառութիւն եւ թողութիւն մեղաց...» Բայց սովորական ընթերցուածին իմաստն ալ նոյն է:

Հարց. Քահանային եւ ժողովրդեան սուրբ խորհուրդը ճաշակելը կամ հաղորդուիլը ի՞նչ արարողութեամբ կ'ըլլայ:

Պատ. Առաջ սարկաւագը կը քարոզէ քահանային վերջին խօսքերուն իմաստովը թէ

«Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ գերգս հոգեւորս: Զի սմա վայել են սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշտօնեայք, հանդերձ երգովք սաղմոս ասացէք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք»:

Դպիրները կ'երգեն այս հին եւ գեղեցիկ երգը.

Օրհնեալ է Աստուած:

«Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ սուրբ զարին իւր ցօղէ ի մեզ ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ալէլուիա:

Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա:

Օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա»:

Իսկ քահանան նոյն միջոցին սուրբ մարմինը ձեռքը բռնած՝ կ'ըսէ.

«Զո՞ր օրհնութիւն կամ զո՞ր զոհութիւն ի վերայ հացիս եւ բաժակիս ասասցուք: Այլ Յիսուս, զքեզ միայն օրհնեմք հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ եւ բարերար Հոգևովդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»:

Յետոյ չորս կտոր կը բեկանէ եւ բաժակին մէջ կը ձգէ՝ ըսելով. «Լրումն Հոգւոյն սրբոյ»:

Հարց. Այս խօսքին իմաստը ի՞նչ է:

Պատ. Երկու նշանակութեամբ կրնայ հասկցուիլ մէկը այս՝ թէ «Սուրբ պատարագին խորհուրդը այս տեղ Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբը կատարումը կ'առնէ : Միւսն ալ այս՝ թէ «ինչպէս որ Քրիստոս Տէրն մեր խաչին վրայ Ամենայն ինչ կատարեալ է ըսելով՝ խոնարհեցուց զլուխը ու աւանդեց սուրբ հոգին, նոյնպէս եւ այժմ խորհրդական մահուամբ կը կատարուի Հոգևով սրբով խաչին վրայ մատուցած պատարագը»:

Հարց. Քահանան ի՞նչ պատրաստութիւն կ'ընէ ճաշակուելու համար:

Պատ. Առաջ երեք աղօթք կ'ըսէ առանձնաբար առ Հայր եւ Որդին միածին. յետոյ ինքզինքը կը տեսնագրէ, (այսինքն կը խաչակնքէ) սուրբ հաղորդութենէն կը խնդրէ իրեն՝ ժողովուրդին եւ բոլոր աշխարհին համար զանազան շնորհք եւ ողորմութիւն, եւ իր թշնամիներուն ու զինքը ասողներուն մեղացը թողութիւն, եւ ասիւ եւ զողորմեամբ կը ճաշակէ սուրբ մարմնէն եւ բաժակէն՝ ըսելով.

«Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգիդ սուրբ: Հաւատով ճաշակեմ զսուրբ եւ զկենդանարար եւ զփրկագործ մարմինս քո Քրիստոս, Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց: Հաւատով ըմպեմ զսրբարար եւ զմաքրիչ արիւնս քո Քրիստոս, Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց: Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս: Եւ սուրբ արիւն քո ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Հարց. Սարկաւազն ալ կը հաղորդուի՞ թէ ոչ.

Պատ. Ըստ կարգին պէտք է քահանայէն ետքն ալ սարկաւազը հաղորդուի, թէպէտ եւ այժմ շատ տեղ այս գովելի սովորութիւնը դադրած է.

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կերպով կը հաղորդուի.

Պատ. Սարկաւազը բարձր ձայնով կ'ըսէ ժողովրդեան՝ վարագոյրը բանալով. «Երկիղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք»:

Դպիրները պատասխան կուտան սաղմոսին խօսքովը. «Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ եկեալ անուամբ Տեառն»:

Եթէ արժանաւորներ կան՝ կը հաղորդուին, եւ այն ժամանակ դպիրները խորհրդաւոր շարական կամ տաղ մը կ'երգեն:

Յետոյ քահանան սուրբ ընծաներով կը խաչակնքէ ժողովուրդին եւ կ'ըսէ.

«Կեցո՛՛ Տէր զժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսոսա յայսմ՛հետէ մինչեւ յաւիտեան»:

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Հարց. Ծաշակումէն ետք ի՞նչ արարողութիւն կայ.

Պատ. Վարագոյրը, մանաւանդ փոքր վարագոյրը (ուր որ կայ) կը քաշուի, եւ քահանան առանձին, դպիրներն ալ երգով գոհացողական աղօթքներ կ'ընեն, ի նոյն յորդորուելով եւ սարկաւազին խօսքերէն:

Հարց. Դպիրներուն երգած առաջին գոհութիւնը ո՞րն է.

Պատ. «Լցաք ի բարութեանց քոց Տէր՝ ճաշակելով զմարմին քո եւ զարիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ: Որ հանապազ կերակրես զմեզ, առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ»:

Հարց. Քահանան ի՞նչ աղօթք կ'ընէ ծածուկ.

Պատ. Գոհանամք գբէն Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի սուրբ Երրորդութիւնդ. ալէլուիա:

«Գոհանամք գբէն Քրիստոս թագաւոր որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով եւ արեամբ քով սրբով: Նորհեա գթաւութիւն եւ զմեժ զողորմութիւն. ալէլուիա:

«Գոհանամք գբէն Հոգիդ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ. յայսմ հետէ մինչեւ յաւիտեան. ալէլուիա»:

Հարց. Սարկաւագը ի՞նչ խօսքերով կը յորդորէ ժողովուրդը ի գոհացողութիւն:

Պատ. «Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Եւ եւս հաւատով ընկալեալք յաստուածային սուրբ երկնային, անմահ, անարատ եւ անապական խորհրդոյս՝ զՏեառնէ գոհացարուք»:

Հարց. Դպիրներուն երգած երկրորդ գոհութիւնը ո՞րն է.

Պատ. Գոհանամք գբէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխելով զմարմինդ եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Հարց. Պատարագին վերջին հանդիսաւոր աղօթքը ո՞րն է

Պատ. «Որ օրհնես զայնոսիկ» աղօթքը, որ վարագոյրին բացուելէն ետք կ'ըսէ քահանան՝ սուրբ աւետարանը ձեռքը բռնած.

«Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն զքեզ Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Կեցո՛ գժողովուրդս քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս քո. ըզլրումն Եկեղեցւոյ քո պահեա:

Սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քո: Դու զմեզ փառաւորեա՛ Աստուածային զօրութեամբ քով. եւ մի թողուր զյուսացեալս ի քեզ:

Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի. Եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս:

Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի քէն. որ ես Հայր լուսոյ եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն»:

Տէ՛ր, դուն որ կ'օրհնես զանոնք՝ որ քեզ կ'օրհնեն եւ կը սրբես զանոնք՝ որ իրենց յոյսը քու վրադ կը դնեն: Ապրեցո՛ւր քու ժողովուրդդ եւ օրհնէ՛ զաւակներդ, պահպանէ՛ Եկեղեցիդ ամբողջութիւնը: Սրբէ՛ զանոնք, որ սիրով ընդունեցին քու Տանդ վայելչութիւնը. դուն փառաւորէ՛ զմեզ քու աստուածային զօրութեամբդ եւ մի՛ լքեր զանոնք, որ իրենց յոյսը քու վրադ կը դնեն: Խաղաղութիւն պարգեւէ՛ ամբողջ աշխարհի, եկեղեցիներուն, քահանաներուն, քրիստոնեայ թագաւորներուն եւ անոնց զօրականներուն եւ այս բոլոր ժողովուրդին: Որովհետեւ բոլոր բարի շնորհները եւ բոլոր կատարեալ պարգեւները վերէն քեզմէ՛ է որ կ'իջնեն, դուն որ Հայրն ես լոյսի եւ քեզի կը վայելեն՝ փառքը, իշխանութիւնը եւ պատիւը, հիմա եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հարց. Դպիրները ի՞նչ երգով կը վերջացնեն իրենց փառաբանութիւնները.

Պատ. Սաղմոսին այս տունը երեք անգամ կրկնելով. «Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմ հետէ մինչեւ յաւիտեան»:

Հարց. Ի՞նչ կը նշանակեն քահանային այն խօսքերը որ կ'ըսէ՝ առ ժողովուրդը դառնալով.

«Կատարումն օրինաց եւ Մարգարէից դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայրակամ տնօրէնութիւնս քո լից եւ զմեզ Հոգևովդ քով սրբով»:

Աշխարհաբար Թարգմանութիւն «Պատարագամատոյց»ի Վարդ Շիկահեր, Ստանպուլ 1999:

Պատ. Ըսել կ'ուզէ թէ «սուրբ պատարագը այն ժամանակ արժանապէս մատուցած կ'ըլլանք՝ երբ որ Հոգևով սրբով, եւ անոր ամենայն շնորհքներովը կը լեցուինք՝ ուստի զայն կը խնդրենք քեզմէ Քրիստոս Փրկիչ մեր»:

Հարց. Վերջին ակետարանին ընթերցումը ի՞նչ խորհուրդ ունի:

Պատ. Թէպէտ եւ այն ակետարանը պատարագին հետ անմիջական կապակցութիւն մը չունի, բայց ինչպէս որ եկեղեցական պաշտամունքներուն եւ խորհրդակատարութիւններուն մեծ մասը ակետարանով կը վերջանան, նոյնպէս եւ սուրբ պատարագը ակետարանով կը վերջացնենք, որ իմացուի թէ Քրիստոսի Տեառն մերոյ կենարար վարդապետութեամբը կ'սկսինք եւ կ'աւարտենք մեր ամենայն հոգեւոր գործերն ու աղօթքները:

Հարց. Ինչո՞ւ համար սովորաբար իբրեւ վերջին ակետարան՝ Յովհաննու առաջին գլուխը կը կարդացուի:

Պատ. Գլխաւորաբար մէջի այն խօսքին համար որ կ'ըսէ. «Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ»։ որ կը նշանակէ թէ կը հաւատանք որ Բանն Աստուած, որ յարգանդի ամենասուրբ Կուսին մարմին եղաւ, այսինքն մարդացաւ ու մեր մէջ բնակեցաւ, նոյն կուսածին մարմնովը պատարագուեցաւ ի խաչին, եւ պատարագի խորհուրդովը ամէն անգամ կը նորոգուի անոր ներկայութիւնը մեր մէջ, ինչպէս որ այսօր եւս նորոգուեցաւ:

Հարց. Ժողովուրդը ի՞նչ կերպով կ'արձակուի:

Պատ. Սարկաւագին քարոզութեամբը քահանային օրհնութիւնը ընդունելէն ետք՝ կը մօտենայ կը համբուրէ անոր ձեռքի սուրբ ակետարանը ի նշան հաւատոյ, եւ ապա օրհնեալ նշխարէն մաս մը կ'առնէ ու կ'երթայ՝ փառք եւ գոհութիւն տալով Աստուծոյ: Այն միջոցին դպիրք կ'երգեն «Ի տէր պարծեսցի անձն իմ» սաղմոսը, կամ ուրիշ խորհրդաւոր տաղ մը: Իսկ քահանան բոլոր ժողովուրդը արձակելէն ետք կը դառնայ դէպի սեղանը, երեք անգամ երկրպագութիւն ընելով կ'ըսէ. «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ողորմեա ինձ»։ եւ կ'երթայ աւանդատունը, զգեստները կը հանէ: